



**«Քննարկումներ՝ ՄԱԿ-ի Կլիմայի փոփոխության կոնվենցիայի
Փարիզյան համաձայնագրի ներքո ազգային մակարդակով
սահմանված ներդրումների/գործողությունների
իրականացմանը»**

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ



Քննարկումներն իրականացվել են «ՄԱԿ ԿՓՇԿ
ներքո Հայաստանի չորրորդ ազգային
հաղորդագրության և երկամյա առաջընթացի
երկրորդ զեկույցի պատրաստում» ՄԱԶԾ-ԳԷՀ
ծրագրի աջակցությամբ

Ծրագրի նպատակն է կազմակերպել և խթանել հասարակության ներգրավվածությունը ՄԱԿ-ի Կլիմայի փոփոխության շրջանակային կոնվենցիայով (UNFCCC) Հայաստանի Հանրապետության նորացված Ազգային մակարդակով սահմանված ներդրումներում (NDC), պետական և մասնավոր հատվածների մասնակցությամբ քննարկումների կազմակերպման ճանապարհով ներկայացնելու 2020 թվականից սկսած NDC-ի իրականացման փուլերը:

Կազմակերպված խորհրդակցությունները և քննարկումները նպատակ ունեն լուսաբանել մինչև 2020 թվականը և դրանից հետո ՄԱԿ-ի Զարգացման ծրագրի և Փարիզի համաձայնագրով Հայաստանի ստանձնած պարտավորությունների կատարման գործում գրանցված առաջընթացը, ներկայացնել NDC-ի մեղմացման նոր թիրախը, ինչպես նաև պետական և մասնավոր հատվածների կարողությունների զարգացման հնարավորությունները, կիրառված և նախատեսվող միջոցառումները և բացահայտել դրանց ֆինանսական և տեխնոլոգիական կարիքները:

Նախապատրաստական՝ աշխատանքների, շահագրգիռ և ակտիվ դերակատարում ունեցող պետական մարմինների, ոլորտային գիտական հաստատությունների, հասարակական կազմակերպությունների լիազորությունների բացահայտման և նախատեսվող գործընթացներին դրանց մասնակցության վերաբերյալ պայմանավորվածությունների ձեռքբերումից հետո ծրագրի կազմակերպիչ «ԷկոԼուր» տեղեկատվական ՀԿ-ն անցկացրել է կլոր սեղաններ, աշխատանքային հանդիպումներ, խորհրդատվություններ առցանց և անմիջական ձևաչափով՝ ներգրավելով ազգային և միջազգային փորձագետների, առանցքային նախարարությունների, գործակալությունների, բիզնես և գիտական համայնքների, ինչպես նաև հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչների:

Հաշվետու Ժամանակահատվածում ապահովվել է իրադարձությունների լուսաբանում, պատրաստվել և www.ecolur.org կայքում հրապարակվել է 33 հոդված և 18 տեսանյութ, տարածվել սոցիալական ցանցերում:

Կազմակերպված միջոցառումներ

1. 2021թ. փետրվարի 10-ին Երևանի «Իբիս» հյուրանոցում կազմակերպված ՀՀ շրջակա միջավայրի նախարարության համակարգման ներքո «ԵՄ-ն կլիմայի համար» ՄԱԶԾ-ԵՄ տարածաշրջանային ծրագրի աջակցությամբ մշակված «Փարիզյան համաձայնագրի ներքո Հայաստանի Հանրապետության 2021-2030 թվականների «Ազգային մակարդակով սահմանված գործողությունները» հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի վերաբերյալ հանրային քննարկում, ընդհանուր թվով 35 մասնակից:



Նկար 1. Փարիզյան համաձայնագրի ներքո Հայաստանի Հանրապետության 2021-2030 թվականների «Ազգային մակարդակով սահմանված գործողությունները» հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի վերաբերյալ հանրային քննարկում

Հանրային քննարկման օրակարգ: ՀՀ կառավարության որոշման նախագծի ներկայացում, զեկուցող՝ «ԵՄ-ն կլիմայի համար» ՄԱԶԾ-ԵՄ տարածաշրջանային ծրագրի հայաստանյան բաղադրիչի ղեկավար Արտակ Բաղդասարյան:



Նկար 2. Արտակ Բաղդասարյան՝ «ԵՄ-ն կլիմայի համար» ՄԱԶԾ-ԵՄ տարածաշրջանային ծրագրի հայաստանյան բաղադրիչի ղեկավար

Հիմնական զեկուցողներ ՄԱԶԾ-ի կլիմայի փոփոխության ծրագրի համակարգող Դիանա Հարությունյանը, ՀՀ շրջակա միջավայրի նախարարության միջազգային համագործակցության վարչության պետ Ռուզաննա Գրիգորյանը, ԵՄ-ն կլիմայի համար» ՄԱԶԾ-ԵՄ տարածաշրջանային ծրագրի հայաստանյան բաղադրիչի ղեկավար Արտակ Բաղդասարյանը ներկայացրեցին ՀՀ կառավարության որոշման ընդունման անհրաժեշտությունը և հիմնավորումները: Միջոցառմանն ակտիվ մասնակցություն ունեցան նաև «Ազգային ջրային համագործակցություն» բնապահպանական ՀԿ-ի նախագահ Արևիկ Հովսեփյանը, «Խազեր» էկոլոգամշակութային ՀԿ-ի փորձագետ Արամ Գաբրիելյանը, «Հանրային իրազեկման և մոնիտորինգի կենտրոն» ՀԿ-ի նախագահ Մարի Զաքրյանը, փորձագետ Համլետ Մելքոնյանը, «Գիտական հետազոտությունների ինստիտուտ»-ի տնօրեն Արտյոմ Պետրոսյանը, «Էներգետիկայի գիտահետազոտական ինստիտուտ» ՓԲԸ-ի ռազմավարական կենտրոնի ղեկավար Վահան Սարգսյանը, փորձագետներ Ռոզա Զուլհալյանը և Մասիս Սարգսյանը:

Դիանա Հարությունյանն իր ելույթում նշեց, որ նոր նախագծի մշակման և ընդունման անհրաժեշտությունը պայմանավորված է նրանով, որ Փարիզյան համաձայնագրի հաստատումից հետո (2016թ.) բոլոր երկրներին առաջարկվել է մինչև 2020թ. դեկտեմբեր ներկայացնել իրենց դիրքորոշման վերանայված տարբերակը և ավելի հավակնոտ նպատակներ առաջադրել՝ ջերմոցային գազերի արտանետումների կրճատման և սահմանափակման ուղղությամբ: Մյուս կողմից, քանի որ մինչև 2015թ-ի Փարիզյան համաձայնագիրը հստակ ձևաչափ չկար, և տարբեր երկրներ իրենց դիրքորոշումն արտահայտելու համար տարբեր ժամկետներ և տարբեր մոտեցումներ էին որդեգրել, դրանից ելնելով համադրելիության ապահովման և ժամկետների ու ձևաչափերի համար բոլոր երկրների համար առաջարկվել էր միասնական աղյուսակային տեսք: Նա նշեց, որ 2015թ. Հայաստանի կողմից ներկայացված առաջին ԱՄԳ-ն (ազգային մակարդակով սահմանված գործողություններ, NDC) սկզբունքային դիրքորոշումներն ամբողջությամբ պահպանվում են առաջարկվող նախագծում, սակայն այնտեղ ամրագրվել են Փարիզյան համաձայնագրի անկյունաքար հանդիսացող՝ ջերմոցային գազերի արտանետումների ցուցանիշների վերաբերյալ դրույթները և հինգ տարին մեկ երկրների ազգային զեկույցներ ներկայացնելու հաստակ պահանջները: Ներկայացվող փաստաթղթում հիմնական թիրախային ցուցանիշը՝ 2030թ. ջերմոցային գազերի նվազեցման գնահատումը, արվել է ՀՀ կառավարության կողմից նոր հաստատված էներգետիկ ոլորտի քաղաքականության հիման վրա:

Ռուզաննա Գրիգորյանը նշեց, որ, վերանայելով փաստաթուղթը, հնարավորություն է ընձեռնվում Հայաստանի համար՝ ներդաշնակեցնելու ազգային մակարդակով սահմանված գործողությունների ժամկետները համաձայնագրի անդամ պետությունների մեծամասնության համար սահմանված՝ 2021-2030թթ. ժամկետներին:

Արտակ Բաղդասարյանը նշեց, որ 2015թ. դեկտեմբերին Փարիզում ընդունվեց կլիմայի փոփոխության Փարիզյան համաձայնագիրը (ՓՀ), որը Հայաստանի Ազգային ժողովը վավերացրեց 2017թ. փետրվարին: 2016-ի նոյեմբերին ՓՀ-ի ուժի մեջ մտնելուց հետո, երկրների կողմից նախապես ներկայացված ԱՄԳ-ները դիտարկվեցին որպես երկրների առաջին Ազգային մակարդակով սահմանված գործողություններ: Համաձայնագրի ուժի մեջ մտնելուց հետո իրականացված զլոբալ գույքագրման արդյունքում երկրների կողմից արձանագրվեց ՓՀ-ի ներքո համատեղ ուժերով հավակնությունների մեծացման և 2020 թ-ին նախորդող ժամանակահատվածում այդ հավակնությունների բացը լրացնելու անհրաժեշտությունը: 2019թ. սեպտեմբերին ՄԱԿ-ի Կլիմայի գործողությունների գագաթնաժողովում շատ պետությունների առաջնորդներ և կառավարությունների ղեկավարներ հայտարարեցին իրենց 2015 թ. ԱՄԳ-ները 2020թ-ին վերանայելու կամ կատարելագործելու մտադրության մասին:

ՀՀ կառավարության հաստատած ԱՄԳ-ի հիմքում դրված սկզբունքների համաձայն՝ երկրի գործողությունները պետք է հիմնված լինեն «Կանաչ էկոնոմիկայի» սկզբունքների վրա ու համատեղելի լինեն Հայաստանի Հանրապետության սոցիալական ու տնտեսական զարգացման նպատակներին:

Մեղմման և հարմարվողականության գործողություններում պետք է հաշվի առնվի էկոհամակարգային մոտեցումը՝ նախապատվությունը տալով դրանց միջև հավասարակշռված և միատեղված գործողություններին: Միջոցառումների արդյունքների

գնահատումը պետք է լինի թափանցիկ, միջազգային պահանջներին համապատասխանող հաշվետվողականության բաց և մատչելի տեղեկատվական համակարգով:

Այն ժամանակ, երբ երկրները պատրաստում և առաջին անգամ ներկայացնում էին իրենց ԱՄՆԳ-ները, դեռևս չկային ՄԱԿ ԿՓՇԿ-ի կողմից համաձայնեցված ուղեցույցներ ԱՄԳ բովանդակության և առանձնահատկությունների վերաբերյալ: Ընդհանուր առմամբ, վերանայման անհրաժեշտությունը պայմանավորված էր 2015-ի ԱՄՆԳ-ի համեմատ հստակության, թափանցիկության և ընկալելիության (ICTU) մեծացման անհրաժեշտությամբ, հավակնությունների մեծացման վերաբերյալ քաղաքական հռչակումներով և Կատովիցեում ընդունված ԱՄԳ ուղեցույցներին հետևելու պատրաստակամությամբ:

Բանախոսն ընդգծեց, որ, այնուամենայնիվ, ԱՄՆԳ ներդրման առաջին ցիկլի մեկնարկային տարին 2021 թվականն է:

Հայաստանի համար 2015թ. ԱՄՆԳ վերանայման կարևորություններն են.

- համապատասխանեցնել Կատովիցեում ընդունված ուղեցույցներին և 2021-2030թթ. ժամանակային հորիզոնին
- սահմանել 2021-2030թթ. համար իրագործելի միջնաժամկետ նպատակներ
- թարմացնել ԱՄՆԳ-2015թ-ում ներառված տեղեկատվությունը և տվյալների հենքը՝ մասնավորապես, երկրի 4-րդ հաղորդագրության, երկամյա առաջընթացի 2-րդ հաշվետվության, վերջին հասանելի ջերմոցային գազերի ազգային գույքագրման արդյունքների ու ոլորտային նոր ռազմավարությունների ներկայացման առումով:

Միաժամանակ, Հայաստանի ԱՄՆԳ-2015-ը պարունակում է միջազգային հանրության համար մի շարք խնդրահարույց կետեր, մասնավորապես, ջերմոցային գազերի արտանետման կրճատման թիրախային ցուցանիշի հաշվարկման և սահմանման մասով:

Արտակ Բաղդասարյանը ներկայացրեց Հայաստանի առաջին ԱՄՆԳ-ում տեղ գտած բացերը և դրանց լրացման անհրաժեշտությունը: Նա ընդգծեց Հայաստանի վերանայված ԱՄԳ-2020-ի հետևյալ փոփոխությունները.

- Կրճատել ԱՄՆԳ 35-ամյա ժամանակահատվածը մինչև 10 տարի՝ 2015-2050թթ.՝ փոխարեն դիտարկելով 2021-2030թթ.:
- Դիտարկել արտանետումների նվազեցման բացարձակ՝ 2030թ. թիրախի օգտագործումը 1990թ. ելակետային ցուցանիշներով:
- Կիրառել թափանցիկության ապահովման լրացուցիչ հաշվառելի ցուցանիշներ, ինչպիսիք են ՀՆԱ-ի էներգատարությունը կամ ջերմոցային գազերի արտանետումները ՀՆԱ-ի մեկ միավորի համար:
- Ապահովել հղումներ ոլորտային ռազմավարություններին և ծրագրերին:
- Նախատեսել ԱՄԳ-ի իրականացման պլան, որը կհստակեցնի ԱՄԳ իրագործման համար անհրաժեշտ պատասխանուտերին, ֆինանսական ռեսուրսները և ինստիտուցիոնալ կարողությունները:

Հայաստանի վերանայված ԱՄԳ-2020-ի մեղմման գործողություններում և հարմարվողականության համար առաջնահերթ ոլորտների առումով պահպանվել է 2015թ. ԱՄԼԳ ոլորտային ծածկույթը: Մասնավորապես, որպես մեղմման գործողությունների ոլորտներ են նշվել՝ էներգետիկան (ներառյալ էներգիայի արտադրություն և սպառում), Արդյունաբերական պրոցեսները և արտադրանքի օգտագործումը (հանքային արդյունաբերություն և F-գազեր), Գյուղատնտեսությունը (աղիքային խմորում, ուղղակի և անուղղակի N₂O արտանետումներ կառավարվող հողերից), Թափոնների (կոշտ թափոնների, կեղտաջրեր) կառավարումը, Անտառային տնտեսությունը (անտառապատում, անտառների կառավարումը, պահպանություն), հողօգտագործումը և այլն:

Հարմարվողականության գործողությունների համար առաջնահերթ ոլորտներ են սահմանվել՝ Բնական էկոհամակարգերը (ջրային և ցամաքային, ներառյալ անտառային էկոհամակարգեր, կենսաբազմազանություն և հողածածկույթ), մարդու առողջությունը, ջրային ռեսուրսների կառավարումը, գյուղատնտեսությունը, ներառյալ ձկնաբուծությունը և անտառային տնտեսությունը, էներգետիկան, բնակավայրերը և ենթակառուցվածքները, զբոսաշրջությունը:

Հիմնական դիտարկումները վերաբերում էին նախագծի վերաբերյալ առաջարկությունների կամ դիտողությունների համար սահմանված ժամկետի սղությանը:

Մասնակիցներին առաջարկվեց իրենց առաջարկություններն ու դիտողությունները, այդ թվում՝ նախագծի քննարկման ժամկետի երկարացման (նաև փետրվարի 12-ից հետո) վերաբերյալ, տեղադրել www.e-draft.am կայքում:

Նշենք, որ 2021 թ. ապրիլի 22-ին ՀՀ կառավարությունը հաստատել է ՄԱԿ-ի Կլիմայի փոփոխության շրջանակային կոնվենցիայի Փարիզյան համաձայնագրի ներքո Հայաստանի Հանրապետության 2021-2030 թվականների «Ազգային մակարդակով սահմանված գործողությունները»: Իսկ 2021թ. մայիսի 13-ին՝ «Հարմարվողականության ազգային ծրագիր՝ Հայաստանում» (ՀԱԾ) ծրագրի աջակցությամբ մշակված Կլիմայի փոփոխության հարմարվողականության ազգային գործողությունների ծրագիրը և 2021-2025 թվականների միջոցառումների ցանկը:¹

Հրապարակում

-  «Հանրային քննարկում՝ «Փարիզյան համաձայնագրի ներքո 2021-2030թթ. «Ազգային ակարդակով սահմանված գործողությունները» հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի վերաբերյալ»¹
- 2. 2021թ. փետրվարի 26, «ԷկոԼուր» մամուլի ակումբում տեղի ունեցած «Հայաստանում էներգետիկայի զարգացումը Փարիզյան համաձայնագրի ներքո» փորձագիտական կլոր սեղան, ընդհանուր թվով 21 մասնակից:

¹ <https://www.ecolur.org/hy/news/climate-change/12996/>



*Նկար 3. «Հայաստանում էներգետիկայի զարգացումը Փարիզյան համաձայնագրի ներքո»
փորձագիտական կլոր սեղան*

Քննարկվեցին հետևյալ հարցերը՝

- «ՀՀ էներգետիկայի բնագավառի զարգացման ռազմավարական ծրագիրը (մինչև 2040 թվականը)», վերականգնվող էներգետիկան Փարիզյան համաձայնագրի ներքո», զեկուցող՝ «Էներգետիկայի գիտահետազոտական ինստիտուտ» ՓԲԸ-ի էներգետիկայի ռազմավարական կենտրոնի տնօրեն Վահան Սարգսյան
- «Էներգետիկա, Ջերմոցային գազերի կադաստր», զեկուցող՝ ՄԱԶԾ-ի փորձագետ Տիգրան Սեկոյան
- «Էներգաարդյունավետության և էներգախնայողության 2020-2030թթ. ՀՀ ծրագիրը», զեկուցող՝ էներգախնայողության աջակցության հիմնադրամի տնօրեն Աստղինե Պասոյան:

Ելույթներով հանդես եկան՝ ՀՀ բնապահպանության նախարարության կլիմայական քաղաքականության վարչության պետ Նոնա Բուդոյանը, ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության էներգետիկայի վարչության էներգաարդյունավետության և տեխնիկական նորմատիվային բաժնի պետ Վահագն Աթանյանը, «Էներգետիկայի գիտահետազոտական ինստիտուտ» ՓԲԸ-ի էներգետիկայի ռազմավարական կենտրոնի տնօրեն Վահան Սարգսյանը, ՄԱԶԾ-ի փորձագետ Տիգրան Սեկոյանը, էներգախնայողության աջակցության հիմնադրամի տնօրեն Աստղինե Պասոյանը:

Նոնա Բուդոյանը նշեց, որ Կլիմայի փոփոխությունն ամբողջ աշխարհում մարդկության զարգացման համար իրական սպառնալիք է, որ կլիմայի փոփոխության հակազդման առումով անհրաժեշտ է իրականացնել հավակնոտ և վճռական քայլեր: Նա նշեց, որ ՀՀ կայուն զարգացումը ենթադրում է տնտեսության ճյուղերի ներդաշնակ ու համահունչ զարգացումներ: Թե՛ արտադրության, թե՛ կենցաղի և թե՛ ուսումնակրթական գործունեության զարգացումները ենթադրում են օրեցօր աճող էներգիայի պահանջմունք: Ներկայումս, չնայած մեր երկրում ձեռնարկված որոշակի միջոցառումներին, ածխածնային վառելիքները, որոնք ներմուծվող են և միևնույն ժամանակ զուրբալ առումով ունեն սահմանափակ պաշարներ, մնում են գերիշխող: Այս խնդիրն ինչ-որ չափով մեղմելու առումով ՄԱԶԾ/ԳԷՀ Փոքր դրամաշնորհների ծրագրերի շրջանակներում Շրջակա միջավայրի նախարարության գործընկերոջ կողմից 2010-ից ի վեր իրականացվել են մի

շարք ծրագրեր՝ նպատակաուղղված վերականգնվող էներգետիկ աղբյուրների կիրառման հնարավորությունների բացահայտմանն ու լավագույն փորձի փոխանցմանը:

Վահագն Աթանյանը նշեց, որ «ՀՀ էներգետիկայի բնագավառի զարգացման ռազմավարական ծրագրով (մինչև 2040 թվականը)» սահմանված է ազատ մրցակցային և ոչ խտրական, ներառական և դիվերսիֆակցված, էներգետիկ անկախության բարձր մակարդակով, մաքուր և էներգախնայող, կայուն զարգացող, տարածաշրջանային նշանակության, հուսալի և անվտանգ, թվայնացված և գիտելիքահեն, բարձր տեխնոլոգիատար, կանխատեսելի և թափանցիկ, հասանելի և արդարացի, բավարար չափով մատչելի խոցելի խավի, ինչպես նաև՝ գրավիչ ներդրողների համար տեսլական, որն ընկած է լինելու էներգետիկայի բնագավառի բոլոր որոշումների հիմքում:²

Վահան Սարգսյանը ներկայացրեց էներգետիկայի բնագավառի զարգացման ռազմավարական ծրագիրը, որը պետք է խարսխված լինի ջերմոցային գազերի արտանետումների կրճատման սցենարների հաշվին ատոմային և վերականգնվող էներգետիկայի զարգացման, ջերմաէլեկտրակայանների արդիականացման, բարձրավոլտ էլեկտրահաղորդման ցանցի և բաշխման էլեկտրական ցանցի զարգացումների, էլեկտրաէներգետիկական շուկայի ազատականացման, տարածաշրջանային էներգետիկ համագործակցության, ջերմամատակարարման մեխանիզմների ներդրման, գազմատակարարման, էներգախնայողության, թվային էներգետիկայի ներդրման, գիտելիքահեն էներգետիկայի խրախուսման, պետական էներգետիկ ընկերությունների օպտիմալ կառավարման մեխանիզմների ներդրման վրա:³

Տիգրան Սեկոյանը, հղում կատարելով ջերմոցային գազերի ազգային տվյալներին, նշեց, որ Հայաստանում ջերմոցային գազերն (ՋԳ) ամենից շատ արտանետվում են էներգետիկայի ոլորտից: 2017թ-ի ՋԳ արտանետումների ամենամեծ մասնաբաժինը՝ 66.7%-ը, եղել է «էներգետիկա» սեկտորից: Մնացած արտանետումները եղել են՝ «Արդյունաբերական պրոցեսներ և արտադրանքի օգտագործում» սեկտորից՝ 8.9%, «Գյուղատնտեսություն, անտառային տնտեսություն և այլ հողօգտագործում» սեկտորից՝ 18.5%, «Թափոններ» սեկտորից՝ 5.8%: 1990թ-ից սկսած՝ «էներգետիկա» սեկտորից արձանագրվել է արտանետումների նվազում՝ 2017թ. կազմել են 7,087.4 Գգ CO₂ համ., որը 1990թ-ի արտանետումների ընդամենը 31.2%-ն է, աճը 2016թ. նկատմամբ կազմել է 7%:

Աստղինե Պասոյանն անդրադարձավ 1990 թվականից հետո Հայաստանում էներգաարդյունավետության մակարդակին, Հայաստանում էներգախնայողության պոտենցիալին: Նա ընդգծեց, որ Հայաստանի էներգաարդյունավետության մակարդակը փոքր-ինչ ցածր է Եվրամիության երկրների համեմատ, սակայն Արևելյան Եվրոպայի երկրների համեմատ միջինից բարձր էներգաարդյունավետություն ունի: Ըստ նրա՝ ներկա կանխատեսումներով էներգաարդյունավետության միջոցառումների շնորհիվ 1990թ. համեմատ կարող ենք ակնկալել 38% էներգախնայողության աճ: Նա թվարկեց ՀՀ էներգաարդյունավետության և էներգախնայողության 2020-2030թթ. ծրագրում ՀՀ էներգախնայողության և վերականգնվող էներգետիկայի ոլորտային քաղաքականության հետևյալ սկզբունքները՝

² <https://www.ecolur.org/hy/news/climate-change/13036/>

³ <https://www.ecolur.org/hy/news/climate-change/13053/>

- Էներգիայի պահանջարկի կրճատում՝ Էներգիայի վերջնական օգտագործման արդյունավետության բարելավման միջոցով
- Վերականգնվող էներգետիկայի ռեսուրսների օգտագործման խթանում
- Ազգային էներգաանվտանգության բարելավում, առանցքային տնտեսական արտադրանքի էներգատարության կրճատում
- Էներգաարդյունավետության լուծումների միջոցով էներգիայի մատչելիության բարձրացում
- Վարքագծային փոփոխությունների խթանում՝ էներգասպառումն անջատելով տնտեսական աճից ռեսուրսարդյունավետության և խելացի աճի միջոցով:

Նրա կողմից էներգախնայողության ազգային ծրագիրը դիտարկվեց առանձին հինգ հիմնական ոլորտներով՝ «Շենքեր», «Հանրային սեկտոր», «Արդյունաբերություն և էներգետիկա», «Գյուղատնտեսություն» և «Շարժականություն» (տրանսպորտ) ոլորտ և մեկ միջոլորտային կապեր ստեղծող «հորիզոնական դաշտով»: Ըստ ոլորտների ներկայացրեց դրանց բնութագրիչները, էներգախնայողությանն ու էներգաարդյունավետությանը միտված գործողությունները, այդ միջոցառումների իրականացման ֆինանսավորման հնարավորություններն ու խոչընդոտները:⁴

Հրապարակումներ

- ✚ «Հայաստանում էներգետիկայի զարգացումը Փարիզյան համաձայնագրի ներքո»⁵
- ✚ «Արեգակնային ֆոտովոլտային ազդեցության ի՞նչ տեսակ են գործադրում հողի և բուսականության վրա»⁶
- ✚ «Հայաստանում ջերմոցային գազերի արտանետման դինամիկան տնտեսության տարբեր ոլորտներում»⁷

3. 2021թվականի մարտի 16-ին «ԷկոԼուր» մամուլի ակումբում տեղի ունեցած «Ջրային ռեսուրսների ինստիտուցիոնալ կառավարումը կլիմայական քաղաքականության լույսի ներքո» փորձագիտական կլոր սեղան, ընդհանուր թվով՝ 21 մասնակից:

Քննարկվեցին հետևյալ հարցերը՝

- «Կլիմայի փոփոխության պայմաններում Հայաստանում ջերմաստիճանի բարձրացման, մթնոլորտային տեղումների և ջրային հոսքերի փոփոխության միտումները», զեկուցող՝ ՀՀ շրջակա միջավայրի նախարարության «Հիդրոոդերևութաբանության և մոնիթորինգի կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրենի Ժ/պ Լևոն Ազիզյան

⁴ <https://www.youtube.com/watch?v=-5ZXp36snRc&t=978>

⁵ <https://www.ecolur.org/hy/news/climate-change/13036/>

⁶ <https://www.ecolur.org/hy/news/climate-change/13084/>

⁷ <https://www.ecolur.org/hy/news/climate-change/13056/>

- «Ջրային կոմիտեն որպես ջրային ռեսուրսների կառավարման ինստիտուտ», գեկուցող՝ ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության ջրային կոմիտեի նախագահի տեղակալ Կարեն Դադբաշյան
- «Ջրային օրենսգրքում կլիմայի և հարմարվողականության համատեքստում նախատեսվող փոփոխություններ, փոքր ՀԵԿ-երի կառուցման և շահագործման, երկրորդային ջրօգտագործման և ջրախնայողության ոլորտներում սահմանվող նոր պահանջներ», գեկուցողներ՝ ՀՀ շրջակա միջավայրի նախարարության ջրային քաղաքականության վարչության պետ Լիլիթ Աբրահամյան, ՀՀ շրջակա միջավայրի նախարարության լիցենզիաների, թույլտվությունների և համաձայնեցումների վարչության ջրօգտագործման թույլտվությունների բաժնի պետի պարտականությունները կատարող Սևակ Մաթիսյան:

Լևոն Ազիզյանը, հիմնվելով իր ղեկավարած կառույցի դիտարկումների վրա, նշեց, որ 1935-2020թթ. Հայաստանի Հանրապետությունում օդի ջերմաստիճանը բարձրացել է 1,38 աստիճանով: ՊՈԱԿ-ում օգտագործված ռեգիոնալ և տարածաշրջանային մոդելի արդյունքների համաձայն՝ ՀՀ-ում 2040թ. կանխատեսվում է ջերմաստիճանի աճ մոտ 1,5 աստիճանով, 2070թ.՝ 3 աստիճանով, իսկ 2100թ.՝ մոտ 5 աստիճանով: Տեղումների քանակը բացի Գեղարքունիքի մարզից, Շիրակի դաշտից, Ապարան-Հրազդանի հատվածից, մնացած շրջաններում հիմնականում նվազել է: Առաջիկա տարիներին սպասվում է գետային հոսքերի նվազման տոկոսի աստիճանական բարձրացում: Հայաստանի Հանրապետությունում 2040թ. կանխատեսվում է գետային հոսքի նվազում մոտ 14%-ով, 2070թ.՝ մոտ 28%-ով, իսկ 2100թ.՝ 39%-ով: Եթե գետային հոսքի բազիսայինը մոտ 7,1 միլիարդ խմ է, ապա, ըստ գնահատականների, 2100թ. կանխատեսվում է, որ գետային հոսքը կկազմի 4,3 մլրդ խմ: 2100թ. կանխատեսվում է Սևանա լիճ մուտք գործող գետային հոսքի նվազում մոտ 30-35%-ով, ինչը բացասական ազդեցություն կունենա լճի կենսական ռեսուրսների վրա: 2040թ. կանխատեսվում է գոլորշիացման աճ լճի մակերևույթից մոտ 10%-ով, 2070թ.՝ 20-25%-ով, 2100թ.՝ 35%-ով:

Կանխատեսվում է, որ 2100թ. ջրամբարներում կդիտարկվի 30-35% լցվածության նվազում: Կլիմայի գլոբալ փոփոխության պայմաններում գնահատվել է 3 խոշոր ռազմավարական նշանակության ջրամբարների առավելագույն լցվածությունը 2100 թվականի դրությամբ: Ըստ գնահատականների՝ Ապարանի ջրամբարի լցվածությունն այդ թվին կկազմի մոտ 35-40 մլն խմ, Ազատի ջրամբարինը՝ 40-45 մլն խմ, իսկ Ախուրյանի ջրամբարինը՝ մինչև 300 մլն խմ:

Հարմարվողականության միջոցառումներով նախատեսված է ոռոգման համակարգերի կատարելագործում, կաթիլային ոռոգմանն ու չորասեր կուլտուրաների մշակման անցում: Ստորերկրյա ջրային պաշարների և աղբյուրների աղբրակալման պրոցեսի գնահատում կլիմայի փոփոխության համատեքստում կատարված չէ, սակայն «Հիդրոոգեոլոգիայի և մոնիթորինգի կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից հարց է բարձրացվել հետազայում անպայման քննարկման դնել և ուսումնասիրություններ կատարել այդ տեսանկյունից խոցելիության գնահատման ուղղությամբ:

Կարեն Դադբաշյանը ներկայացրեց ՀՀ ոռոգման համակարգի ցուցանիշները, ոռոգման համակարգում 40-45% ջրակորուստների պատճառները: Նա ներկայացրեց ոռոգման ջրի արդյունավետ մատակարարման ապահովման նպատակով Ջրային

կոմիտեի և Էկոնոմիկայի նախարարության համագործակցությամբ մշակված միջոցառումների՝ դաշտերում հողակտորների միացման, հողերի խոշորացման ու կոոպերատիվների ստեղծման մոտեցումները, կառուցվելիք Կապսի ու Վեդիի ջրամբարների՝ այդ մոտեցումն ապահովող փորձնական համակարգերի հազեցվածության մասին: Անդրադարձավ կառուցված Բաղրամյան-Նոյակերտ համակարգի հազեցվածության և այնտեղ կաթիլային համակարգի տեղադրման հարցերին: Նշեց նաև կադաստրային ոռոգելի տարածքների (194,796 հազար հա), դրանցից ջրօգտագործող ընկերությունների սպասարկման տարածքում գտնվող (151 հազար հա) և 2020թ. 85 հազար հա փաստացի ոռոգված տարածքների և չոռոգման պատճառների մասին: Ըստ նրա՝ ջրօգտագործման համակարգերի արդյունավետ աշխատանքի համար անհրաժեշտ է կատարել 3-4 միլիարդ դրամի ներդրում և համակարգում գլոբալ փոփոխություն իրականացնել: Կարեն Դադբաշյանն անդրադարձավ նաև 2020թ. Արփա-Սևան երկու թունելներով Սևանա լիճ տեղափոխված շուրջ 210 միլիոն խմ ջրի, դրա շնորհիվ նախորդ տարվա համեմատ 9 սանտիմետրով լճի մակարդակի բարձրացման և 2021 թվականին իրականացվելիք ջրառի շեմը 170 միլիոն խմ-ից հնարավորինս չգերազանցելու, ինչպես նաև Արարատյան դաշտում դրենաժային համակարգերից դուս եկող շուրջ 1,6 միլիարդ ջրի նվազեցման համար նախատեսվող ջրամբարաշինության ու պոմպակայանների, ինչպես նաև ջրի շրջանառու համակարգերի ներդնման ծրագրերին մասին:

Կարեն Դադբաշյանը նշեց, որ Ջրային կոմիտեի պետական սեփականության ներքո գտնվող ջրամբարներն ունեն շուրջ 1,2 միլիարդ խմ ջուր ամբարելու պոտենցիալ, որը կլիմայի գլոբալ փոփոխությունների հետևանքով կկազմի մոտ 950 միլիոն խմ ջուր: Ախուրյան-Արաքս թևի ջրամբարների խնդիրների վերաբերյալ նշեց, որ 2019-2020թթ. Թուրքիան իր ստեղծած համակարգի շնորհիվ կարողանում է ամբարել Հայաստան հասնող ջուրը, և Թալինի և Արմավիրի վերին շրջանների տարածաշրջաններն արդեն իսկ կանգնած են ջրի խնդրի առաջ: Խնդիրը բարդանում է նրանով, որ Թուրքիան Ջրի միջազգային համաձայնագիրը չի ստորագրել և Հայաստանն այդ գործընթացները կանխարգելելու համար չի կարող կիրառել միջազգային լծակներ:

Ըստ Կարեն Դադբաշյանի՝ ջրանցքների և պոմպակայանների միջոցով գիշերային ոռոգում իրականացնելու տեխնիկական հնարավորությունների բացակայության պայմաններում ոռոգման անընդհատությունը պահպանելու համար Ջրային կոմիտեն դիմել է ՀՀ կառավարություն՝ 32-օրյա կարգավորման ջրամբարներ կառուցելու առաջարկով: Կորուստների դեմ պայքարի համար համակարգում արդեն իսկ տեղադրված է 130 «SCADA» առցանց ջրաչափական սարքավորում, պետք է սկսեն ևս 2100 ջրաչափ տեղադրման աշխատանքներ:

Լիլիթ Աբրահամյանը նշեց կլիմայի փոփոխության հետևանքները մեղմելու ուղղությամբ ՀՀ շրջակա միջավայրի նախարարության կողմից ջրային ոլորտի քաղաքականության մեջ ջրախնայող տեխնոլոգիաների օգտագործման, ջրային էկոհամակարգերի պահպանության ու ջրային ռեսուրսների ամբարման հարցերի մասին: Նա ներկայացրեց Կլիմայի և հարմարվողականության համատեքստում շրջակա միջավայրի նախարարության կողմից վերջին տարիներին իրականացված և նախատեսվող մի շարք օրենսդրական փոփոխություններ՝

1. 2019թ. Ջրային օրենսգրքում կատարված փոփոխություններով հաստատվել են փոքր ՀԷԿ-երի ջրօգտագործման թույլտվությունների տրամադրումը մերժելու հիմքերը: Ըստ օրենսգրքի թույլտվությունները մերժվում են այն փոքր ՀԷԿ-երի կառուցման համար,

որոնք նախատեսվում են անտառային, սողանքային, Սևանա լճի անմիջական կենտրոնական գոտու տարածքներում, կարմիրգրքյան, էնդեմիկ ձկնատեսակների ձվադրավայր հանդիսացող գետերի, դերիվացիոն խողովակներով 40 և ավելի տոկոսով ծանրաբեռնված գետերի վրա:

2. Նախատեսվում է հաստատման ներկայացնել «Նոր կառուցվող փոքր հիդրոէլեկտրակայանների ջրօգտագործման թույլտվությունների հայտերի մերժում նախատեսված՝ Հայաստանի Հանրապետության կարմիր գրքում գրանցված կամ տարածքին բնորոշ էնդեմիկ ձկնատեսակների ձվադրավայրեր հանդիսացող կամ դերիվացիոն խողովակներով 40 տոկոս և ավելի ծանրաբեռնված գետերի ցանկը սահմանելու մասին» որոշումը / ընդունվեց կլոր սեղանից օրեր անց՝ 2021 թվականի ապրիլի 8-ին ՀՀ կառավարության N 488-ն որոշմամբ/:

3. 2019թ. մշակված և ՀՀ կառավարության կողմից 17.01.2019թ. հաստատված «Ջրախնայող տեխնոլոգիաների ներդրման հայեցակարգը և հայեցակարգից բխող միջոցառումների ծրագիրը հաստատելու մասին» N 39-Լ, որոշում:

4. Նախատեսվում են ջրային օրենսգրքի փոփոխություններ, որով անդրադարձ է կատարվելու երկրորդային ջրօգտագործման դրույթներին՝ կիրառելով խրախուսական մեխանիզմներ, ջրօգտագործողի կողմից հետադարձ, տնտեսական գործունեության արդյունքում արտահոսող ջրային ռեսուրսը մեկ այլ նպատակով, կրկնակի շրջանառու համակարգերում ներդնելու համար: Այդ փոփոխություններով նախատեսվում է ռոռզման նպատակով կրկնակի ջրօգտագործման համար խրախուսման մեխանիզմներ: Ձկնաբուծական տնտեսությունների նկատմամբ Ջրային օրենսգրքով պարտադիր պահանջ է դրվելու էկոլոգիական թողքի կետում առցանց ջրաչափական-հոսքաչափական սարք տեղադրել:

5. Տարվում են ՓՀԷԿ-երը բնօգտագործման վճար վճարողների ցանկում ներառելու վերաբերյալ աշխատանքներ: Ընթացքի մեջ են գտնվում շրջանակային դիրեկտիվների մոտարկման գործընթաց, ջրավազանային կառավարման պլանների մշակումը: 2023թ. վերջին պատրաստ կլինի Հյուսիսային ջրավազանային տարածքի կառավարման հաստատված պլանը: Պլանները մշակվում են կառավարության կողմից հավանության արժանացած կառավարման պլանների մոդելին համապատասխան, որտեղ ներառված են կլիմայի փոփոխության և հարմարվողականության գնահատման դրույթները:



Նկար 4. ՀՀ շրջակա միջավայրի նախարարության ջրային քաղաքականության վարչության պետ Լիլիթ Աբրահամյան, ՀՀ շրջակա միջավայրի նախարարության լիցենզիաների, թույլտվությունների և համաձայնեցումների վարչության ջրօգտագործման թույլտվությունների բաժնի պետի պարտականությունները կատարող Սևակ Մաթիսյան, «ԷկոԼուր» տեղեկատվական ՀԳ-ի նախագահ Բնգա Ջարաֆյան

Սնակ Մաթիլյանն իր ելույթում նշեց, որ վերջին տարիներին ՀՀ շրջակա նախարարություն կաթիլային համակարգով ոռոգման համար ջրօգտագործման հայտեր ներկայացնողների թիվը մի քանի անգամ աճել է նախորդ տարիների համեմատ: Արարատյան դաշտում նկատելի է դրենաժային համակարգից ձկնաբուծության համար ՋԹ-ների հայտերի ներկայացման միտում, ինչը նախկինում բացակայում էր: Երբ որոշվեց ձկնաբուծության նպատակով նոր ՋԹ-ներ չտրամադրել, ձկնաբուծարանները սկսեցին ադապտացվել նոր պահանջներին և դրենաժային համակարգի ջուրը երկրորդային նպատակով օգտագործել ձկնաբուծության նպատակով: Ի պատասխան կլոր սեղնի մասնակցիցների հարցերի, Մաթիլյանը նշեց, որ փոքր ՀԷԿ-երին ՋԹ տրամադրելու ժամանակ ջրապահանջարկի հաշվարկի դեպքում հաշվի չեն առնվում ՓՀԵԿ-երի տուրբինների հզորությունները, քանի որ ավել ջրառի հակազդման միջոց կիրառվում են տույժեր և տուգանքները, ոչ ճիշտ գնահատված հիդրոլոգիական հոսքերի նվազման համար նախարարությունը ՋԹ-ով տրամադրած ջրաքանակների համար երաշխիքներ չի տալիս, ՋԹ-ի տրամադրման գործընթացում հաշվի չեն առնում նաև ջրաղբյուրի ջրաքանակի վրա կլիմայի փոփոխության ազդեցությունը, եթե դրա մասին հայտնի չէ նախարարությանը, իսկ նախարարությունը չի կարող կանխատեսել, որ կոնկրետ այդ ջրաղբյուրը քանի տարի հետո կարող է ցամաքել:

Հրապարակումներ

- ✚ «Մարտի 22-ը Ջրի համաշխարհային օրն է. Հայաստանում ջրային հոսքերի փոփոխությունն ու հիմնական միտումները տարբեր տարիներին»⁸
 - ✚ «Որոնք են Հայաստանում ջրային ռեսուրսների կորուստների հիմնական պատճառները և դրանց վերացման տեսլականը»⁹
 - ✚ «Ինչպիսին կլինի նոր Ջրային օրենսգիրքը՝ Կլիմայի փոփոխության և հարմարվողականության համատեքստում»¹⁰
4. 2021 թվականի մարտի 30-ին «ԷկոԼուր» մամուլի ակումբում տեղի ունեցած «Հայաստանում ջրային ռեսուրսների անվտանգությունը՝ կլիմայական կանխատեսումների սցենարի ներքո» փորձագիտական կլոր սեղան, ընդհանուր թվով՝ 20 մասնակից:

Քննարկվեցին հետևյալ հարցերը՝

1. «Ջրային ռեսուրսների խոցելիության նվազմանն ուղղված գործողությունները», զեկուցողներ՝ ՄԱԶԾ Կլիմայի փոփոխության ծրագրերի փորձագետ Վահագն Տոնոյան և ՄԱԶԾ ԿԿՀ հարմարվողականության ազգային ծրագրի իրականացման և մոնիտորինգի հարցերով թիմի ղեկավար Նաիրա Ասլանյան

2. «Կլիմայական խոցելի ջրային օբյեկտներ», զեկուցող՝ ՄԱԶԾ 4-րդ ազգային հաղորդագրության ջրի ուղղակի հարցերով փորձագետ Լիանա Մարգարյան

⁸ <https://www.ecolur.org/hy/news/climate-change/13081/>

⁹ <https://www.ecolur.org/hy/news/climate-change/13118/>

¹⁰ <https://www.ecolur.org/hy/news/climate-change/13090/>

3. «Ջրահեռացման խնդիրները Հայաստանում», գեկուցող, «Զինջ» ՍՊԸ-ի հիմնադիր տնօրեն Էդուարդ Մեսրոպյան:

Վահագն Տոնոյանը նշեց, որ համաձայն Համաշխարհային ռեսուրսների ինստիտուտի գնահատման՝ ՄԱԿ-ի 164 անդամ երկրների շարքում ջրային սթրեսի ցուցանիշով Հայաստանը դասակարգվում է 34-րդ տեղում: Ըստ Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպության՝ Հայաստանը համարվում է ջրասակավ երկիր, որը ենթակա է ջրային սթրեսի՝ ջրի շահագործման ինդեքսը բարձր է 45%-ից:



Նկար 5. Ձախից ՄԱԶԾ Կլիմայի փոփոխության ծրագրերի փորձագետ Վահագն Տոնոյան, աջից «ԷկոԼուր» տեղեկատվական ՀԿ-ի նախագահ Բնգա Ջարաֆյան

Ըստ նրա՝ Հայաստանում առկա բոլոր ջրային ռեսուրսները բավարար են տարեկան մեկ շնչի հաշվով շուրջ 3,100 խմ ջուր մատակարարելու համար, ի տարբերություն հարևան երկրների, որտեղ այդ ցուցանիշն ավելի բարձր է: Կան խիստ տատանումներ նաև տարեկան հոսքերի ձևավորման առումով: Գարնանային վարարումների ընթացքում հիմնականում անցնում է գետային հոսքի ավելի քան 55%-ը:

Խմելու ջրի շուրջ 96%-ը և ջրառի ավելի քան 40%-ը կազմում են ստորերկրյա ջրերը, և դրանց պատշաճ կառավարումը նույնպես էական դեր ունի:

Ըստ նրա՝ ռոռգման ոլորտը շարունակում է մնալ Հայաստանի խոշոր սպառողը: Ռոռգման խնդիրները խորանում են Թուրքիայի կողմից վերջին տարիներին սկսված ինտենսիվ ջրամբարաշինության, և, դրանով պայմանավորված, Արաքս անդրսահմանային գետի միջին տարեկան հոսքի շուրջ 56%-ով սպասվող կրճատմամբ, ինչն էական ազդեցություն կունենա Հայաստանի վրա՝ պայմանավորված Արաքս գետի հոսքի 50%-50% համամասնությամբ Թուրքիայի հետ համատեղ օգտագործմամբ:

Խոշոր ջրօգտագործողներից է հիդրոէներգետիկայի ոլորտը, որի տարեկան ջրառի ծավալն արդեն գերազանցում է 5 միլիարդ խմ ծավալը: Այդ զարգացումը որոշ գետավազաններում էական ճնշում է գործադրում ջրային ռեսուրսների վրա, մասնավորապես, Էկոլոգիական թողքի խախտման առումով:

Հայաստանը կլիմայի փոփոխության հանդեպ ունի բարձր ռիսկայնություն, մեծ զգայունություն և հարմարվողականության սահմանափակ կարողություններ: Կլիմայի փոփոխությամբ պայմանավորված՝ սպասվում է ջերմաստիճանի շարունակական

բարձրացում, իսկ գյուղատնտեսության, ոռոգման ոլորտում ակնկալվում է բերքատվության անկում և ոռոգման պահանջարկի մեծացում:

Ցանկացած սցենարի, տարածաշրջանային մոդելի դեպքում, կլիմայի փոփոխությամբ պայմանավորված, ակնկալվում է գետային հոսքի կրճատում, և հարմարվողականության միջոցառումներ իրականացումը հրամայական է:

Գնահատվել է դեպի Սևանա լիճ գետային ներհոսքը, այն 2100 թ. նույնպես կկրճատվի բազիսային ժամանակահատվածի համեմատ (բազիսային ժամանակահատվածում ընդհանուր գետային ներհոսքը 758 մլն խմ է): Գետային ներհոսքի կանխատեսվող նվազումը տատանվում է 137-309 միլիոն խմ-ի սահմաններում: Օր առաջ պետք է հիմնավորվի կլիմայի փոփոխության հարմարվողական միջոցառումների իրականացման անհրաժեշտությունը, սակայն դրա համար բացակայում են փաստացի գոլորշիացման տվյալները:

Ըստ գնահատման՝ 20 միլիոն խմ ու ավելի ծավալով ջրամբարներում նույնպես բացակայում են փաստացի գոլորշիացման տվյալները՝ դիտարկումների շարժական չափիչ սարքերի բացակայության պատճառով:

Վահագն Տոնոյանը նշեց, որ Կանաչ կլիմայի հիմնադրամի Հարմարվողականության ազգային ծրագրի շրջանակներում ներկայումս իրականացվում է Հարմարվողականության ազգային ծրագրի մշակում վեց գերակա ոլորտների համար, որոնցից մեկը ջրային ռեսուրսների ոլորտն է: Ծրագրի նպատակը համահունչ է ազգային անվտանգության, կայուն զարգացման նպատակներին և Փարիզի համաձայնագրի ներքո Հայաստանի ստանձնած պարտավորություններին: Ջրային ռեսուրսների ոլորտում Հարմարվողականության ծրագրի մշակման շրջանակներում 2019-2020թթ. իրականացվել է իրավական, ինստիտուցիոնալ, հարմարվողականության բացերի և խոչընդոտների վերաբերյալ, կլիմայական ռիսկերի և խոցելիության գնահատում և ներկայացվել հետևյալ առաջարկները.

1. Սևանա լճում և ջրամբարներում տեղադրել չափիչ սարքեր ջրի մակերևույթից գոլորշիացման ծավալների որոշման նպատակով
2. «Հայջրնախագիծ» ինստիտուտի կողմից 2014թ. մշակված ջրամբարաշինության հայեցակարգը ևս մեկ անգամ ուսումնասիրել, դիտարկել կլիմայի փոփոխության տեսանկյունից
3. Կլիմայի փոփոխության համատեքստում պետք է վերլուծություն կատարել նախքան ջրամբարների համար տեխնիկատնտեսական հետազոտություններ կատարելը, վերանայել ջրամբարաշինության հայեցակարգը
4. Կլիմայի փոփոխության գործոնը հաշվի առնել ինչպես ջրօգտագործման հայտերը դիտարկելիս, այնպես էլ այդ ոլորտների զարգացման ռազմավարություններում և հայեցակարգերում
5. Վերանայել ոռոգման նորմերը ջրապահանջի փոփոխության տեսանկյունից
6. Ոռոգման համակարգում ներդնել նորարարական ջրախնայող և էներգաարդյունավետ տեխնոլոգիաներ, նվազեցնել ոռոգման համակարգերի հոսակորուստները

7. Խմելու ջրամատակարարման համակարգում ներդնել ջրախնայող և էներգաարդյունավետ տեխնոլոգիաներ ջրամատակարարման համակարգերում, նվազեցնել հոսակորուստները

8. Վերանայել «ՀՀ հիդրոէներգետիկայի ոլորտի ռազմավարական ծրագիրը»՝ հաշվի առնելով կլիմայի փոփոխության ներքո ջրային ռեսուրսների խոցելիությունը, ինչպես նաև բնապահպանական թողքերի նոր մեթոդաբանությունը

9. Ջրավազանային կառավարման պլաններում պետք է անդրադարձ կատարվի կլիմայի փոփոխության արդյունքում ջրային ռեսուրսների խոցելիությանը, հեղեղումների և սելավների հետ կապված անհրաժեշտ է ուսումնասիրել հեղեղավտանգ և սելավավտանգ տարածքները, ներդնել հեղեղումների վտանգի վաղ ազդարարման համակարգ՝ հաշվի առնելով դրանց ինտենսիվացումը՝ կլիմայի փոփոխությամբ պայմանավորված

10. Բարելավել հիդրոոգերնութաբանական մոնիթորինգի համակարգը՝ ջրերի հոսքի ձևավորման գոտիներում հիմնել 14 նոր հիդրոլոգիական դիտակետ, իսկ բարձրլեռնային գոտիներում հիմնել 5 նոր արդի ավտոմատ օդերնութաբանական կայան

11. Հզորացնել ստորերկրյա ջրերի քանակական մոնիթորինգի դիտացանցը, իրականացնել հետազոտություններ Հայաստանում կլիմայի փոփոխության ստորերկրյա ջրային ռեսուրսների խոցելիության գնահատման ուղղությամբ

12. Հզորացնել Ջրային պետական կադաստրը և կատարելագործել տվյալների փոխանակման գոյություն ունեցող համակարգը

13. ՀԷԿ-երի համար եվրոպական երկրների փորձի կիրառմամբ սահմանել ջրառի մասնակի վճարաչափ (գործող դրույքաչափերի 10%-ի չափով):

Լիանա Մարգարյանը ներկայացրեց հետևյալը՝

1. Արարատյան դաշտի ստորերկրյա ջրային պաշարների նվազման միտումները՝ նշելով, որ հաստատված ջրառի միջին թույլատրելի 1094,1 հազար խմ ծավալները գերազանցվել են և կազմել 1753.4 հազ. խմ 2013 թվականին և 1608.50 հազ. խմ՝ 2016 թվականին:

2. Ստորերկրյա ջրային հորիզոնների անկման հետևանքով տեղի են ունեցել ջրերի ընդհանուր կոշտության և հանքայնացման աստիճանի բարձրացումներ և խմելու ու ոռոգման ջրերին ներկայացվող նորմերի գերազանցումներ: Բերվեցին այդ օրինաչափությունները հաստատող տվյալներ Մասիսի տարածաշրջանի 16 և Արմավիրի մարզի 9 գյուղերում կատարված ջրերի ուսումնասիրություններից:

3. Բանախոսը նշեց նաև, որ ուսումնասիրել են ՀՀ որոշ մակերևութային ջրաղբյուրների՝ Գեղի, Մեղրի և Մարմարիկ գետերից ջրառների բնութագրերը: Ըստ այդմ, Գեղի գետից Սյունիքի մարզի Կապան քաղաքի 80%-ի ջրամատակարարման ապահովման նպատակով տարեկան իրականացվում է մոտ 19.3 միլիոն խմ ջրառ, սակայն համակարգում 75-78% ջրակորուստներ կան: Փաստացի ջրամատակարարվում է միայն միջինում 4.5 միլիոն խմ: Մեկ բնակչին օրական բաժին ընկնող ջրի քանակը կազմում է 54.4 լ՝ մոտ 3.7 անգամ պակաս, քան անհրաժեշտ է ըստ ՀՀ-ում սահմանված նորմի (200-250լ/օր): Կլիմայի գլոբալ տաքացման կանխատեսումներով՝ Գեղի գետի ակունքում

բնական հոսքը 2040թ., 2070թ. և 2100թ. համապատասխանաբար կնվազի՝ 5-8%-ով, 10-15%-ով և 18-25%-ով: Հետևապես, այս ջրակորուստների պայմաններում Կապան քաղաքի ջրամատակարարման ռիսկը շատ բարձր է, և անհրաժեշտ է կիրառել հարմարվողականության միջոցառումներ:

Խմելու-կենցաղային նպատակով ՀՀ Սյունիքի մարզի Մեղրի քաղաքի 90% բնակչության ջրամատակարարման նպատակով Մեղրի գետից տարեկան ջրառվում է մոտ 3.5 միլիոն խմ ջուր, սակայն 73-82% ջրակորուստների պատճառով ջրամատակարարվում է միայն մոտ 0.79 միլիոն խմ, որը տրվում է 4700 բնակչի: Մեկ բնակչին բաժին ընկնող ջրի քանակը օրական կազմում է 460 լ՝ մոտ 2.3 անգամ ավելի, քան անհրաժեշտ է: Ըստ կանխատեսումների՝ Կլիմայի գլոբալ տաքացման համատեքստում Մեղրի գետի ակունքում բնական հոսքերի նվազումը 2040թ., 2070թ. և 2100թ. համապատասխանաբար կկազմի՝ 8-9%, 16% և 26-27%:

Հանքավան, Աղավնաձոր, Մեղրաձոր գյուղերի և հանգստյան գոտիների ջրամատակարարումն ապահովող Մարմարիկ գետից տարեկան վերցվում է մոտ 3.6 միլիոն խմ ջուր, սակայն ջրակորուստները կազմում են 80%: Ջրամատակարարվում է միայն մոտ 0.72 միլիոն խմ: Մեկ բնակչին բաժին ընկնող ջրի քանակը կազմում է 313 լ/օր՝ մոտ 1.5 անգամ ավելի, քան ՀՀ-ում սահմանված նորմն է (200-250լ/օր): Մարմարիկ գետի ակունքում կանխատեսվում է բնական հոսքի նվազում 2040թ.՝ 2-4%-ով, 2070թ.՝ 4-5%-ով և 2100թ.՝ 6-12%-ով: Այդ փոփոխություններին հարմարվողականության համար անհրաժեշտ է կիրառել հարմարվողականության միջոցառումներ:

4. Անդրադառնալով Սևանա լճի խնդիրներին՝ բանախոսը ներկայացրեց լճի հայելու մակերեսի, ծավալի և որակի նվազող ցուցանիշները 1933, 2014 և 2019թթ. համար: Ըստ նրա՝ լճի մակերեսը 1933 թվի համեմատությամբ 2019 թվականին նվազել է 0,9 անգամ, ջրի ծավալը՝ 0,64 անգամ, ջրի որակն, ըստ թթվածնային կենսաբանական պահանջի, աճել է 2,8 անգամ, ջրում քլորոֆիլ Ա-ի պարունակությունը 2017-2019թթ-ին աճել է 1,2 անգամ, 2010-2019թթ-ին լճի ջրի ջերմաստիճանը մայիս-հունիս-հոկտեմբեր ամիսներին աճել է միջինում 0.6 °C-ով: Կենցաղային կեղտաջրերի միջոցով Սևանա լիճ է մուտք գործում տարեկան մոտ 270 տոննա ֆոսֆոր և մոտ 1396 տոննա ազոտ: Բանախոսը նշեց նաև, որ կլիմայի գլոբալ փոփոխության կանխատեսումներով պայմանավորված օդի ջերմաստիճանի 2040 թվականին 1,7-1,8C⁰-ով, 2100 թվականին՝ 4,5-4,7 C⁰-ով բարձրացումը կհանգեցնի նրան, որ 2100 թվականին Սևանա լիճ հոսող գետային հոսքը կնվազի 19%-ով, ինչի արդյունքում Սևանա լճում կպահպանվի Ֆիտոպլանկտոնի ինտենսիվ աճը, կակտիվանան Էվտրոֆացման պրոցեսները և լճի մակերևույթից կավելանան մեթանի արտանետումները:

5. Ջրային ռեսուրսների վրա հանքարդյունաբերության և կլիմայի փոփոխության ազդեցությանն անդրադառնալով՝ բանախոսը նշեց, որ, Ողջի-Կապան դիտակետի համար կանխատեսում է արվել, թե ինչպես կփոխվի ջրի որակը շարունակական աղտոտման դեպքում՝ հաշվի առնելով պղինձն ու ցինկը՝ որպես հանքարդյունաբերական ինդիկատորներ, և նիտրատն ու ամոնիումը՝ որպես կենցաղային կեղտաջրերի աղտոտման ինդիկատորներ: Կատարվել է գնահատում ըստ երկու սցենարի: Վատագույն սցենարի համաձայն, եթե ոչ մի միջոցառում չիրականացվի և շարունակվի աղտոտումը, ապա նիտրատի և ամոնիումի աղտոտվածությունը կշարունակի աճել՝ 1,7-2 անգամ գերազանցել, պղինձի ու ցինկի դեպքում նույնպես: Սակայն բնապահպանական

միջոցառումներ ձեռնարկելու դեպքում հինգ տարվա ընթացքում կտեսնենք ամոնիումի մինչև 40 անգամ նվազում, պղնձի՝ երկու անգամ, և ցինկի մինչև 10 անգամ նվազում Ողջի գետում: Եթե կանխարգելի աղտոտիչների մուտքը ջրային էկոհամակարգ, ապա ջրային էկոհամակարգի ինքնավերականգնվելու ընդունակության հաշվին տեղի կունենա համակարգի վերականգնում և ջրի մաքրում: Ծանր մետաղների դեպքում այս երևույթը բավական երկարատև գործընթաց է, բայց իրենք, մնալով գետի ջրի հատակին, կենսաքիմիական պրոցեսների շնորհիվ կարողանում են վերափոխվել և դառնալ ջրային կենսաբազմաճանաչության համար որոշակիորեն փոփոխված, անվնաս և յուրացվող ձևեր: Լիանա Մարգարյանը նշեց նաև, որ հանքարդյունաբերության ազդեցության հետևանքով, ներկայում կան գետերը, որտեղ լիովին վերացել է կենսաբազմաճանաչությունը, օրինակ, Կարճևան և Ախթալա գետերը: Ի արձագանք կլոր սեղանի մասնակցի առաջարկի, բանախոսը նշեց, որ աշխատանքների արդյունքները ներկայացվել են հասցեատերերին, տեղ գտել տարբեր միջազգային ծրագրերում կամ գործընկեր կազմակերպությունների հետ համատեղ աշխատանքներում և հասանելի են բոլոր շահառուների համար: Ինգա Զարաֆյանն էլ հավելեց, որ շահագրգիռ հասարակությունը պետք է բարձրաձայնի այդ փաստերի մասին և լոբբինգ անի այդ հարցերի շուրջ, որ հասարակական կազմակերպություններն այդ փաստերի օգտագործմամբ կարող են ճիշտ ձևավորել հարցումներն ու շեշտադրումները, որպեսզի վերջնարդյունքում ունենանք համապատասխան որոշումներ:

Էդուարդ Մեսրոպյանը նշեց, որ Հայաստանում բացակայում է ջրային ռեսուրսների պահպանության գործառույթ իրականացնող լիազոր մարմինը, ներկայացրեց դա հաստատող տվյալները. ՋԹ տրամադրելիս չի գնահատվում ջրաղբյուրի հզորությունը՝ ելքի և սեզոնային տատանումները: ՋԹ-ի փաստաթղթում նշվում է, որ նախարարությունը պատասխանատվություն չի կրում ջրաղբյուրում ջրաքանակի նվազման դեպքում: Ջրային ռեսուրսների պահպանության բացակայության մասին են վկայում նաև այն օրինակները, երբ ամբողջ գետը խողովակով տեղափոխվում է մինչև սահման և լցվում հարևան երկիր գնացող անդրսահմանային գետ:

Բանախոսն անդրադարձավ նաև կեղտաջրերի, հատկապես արտադրական, մաքրման նկատմամբ պահանջին և հսկողության բացակայությանը կամ թույլ հսկողությանը:

Էդուարդ Մեսրոպյանը նշեց, որ ջրային ռեսուրսների անվտանգությունն ունի երեք հիմնական բաղադրիչ՝ ջրային ռեսուրսների հուսալի պահպանություն, արդյունավետ կառավարում և նպատակային օգտագործում:

Նա խոսեց Հայաստանում գործող քաղաքային կեղտաջրերի մեխանիկական մաքրման 5 կայանների /Գավառ, Մարտունի, Վարդենիս, Ջերմուկ և Դիլիջան քաղաքներ/ և կառուցված, սակայն դեռևս չշահագործվող /Երևանի Աերացիայի/ մաքրման կայանների և քաղաքային կեղտաջրերի լիարժեք մաքրման 2 նոր կայանների նախնական նախագծերի (Սևան և Մեծամոր), ավարտվող՝ Փարաքարի կեղտաջրերի լիարժեք մաքրման կայանի՝ հիբրիդային տեխնոլոգիայով վերակառուցման աշխատանքների, ինչպես նաև Վարդենիկ համայնքի կեղտաջրերի մաքրման կայանի (ազոտի և ֆոսֆորի խորը հեռացմամբ) ծրագրային առաջարկությունների մասին՝ նշելով, որ դրանք արդյունավետ չեն կարող գործել, քանի դեռ բավարար չեն գնահատվում կայանի

հզորությանը համապատասխանող կեղտաջրերի, հեղեղատարների, կեղտաջրերի բաղադրությունը և ցուցանիշները:

Ոլորտի կարգավորման համար նա ներկայացրեց հետևյալ առաջարկները.

1. Սահմանել ջրային ռեսուրսների պահպանության պետական մարմին, որը պետք է ուսումնասիրի, գույքագրի, գնահատի երկրի մակերևութային և ստորգետնյա ջրային ռեսուրսները, կանխատեսումներում սահմանի ջրային ռեսուրսի այն քանակը, ձևավորի ջրի առաջարկն ու պահանջարկը՝ ջրօգտագործման հայտերի ընդունման, վերլուծումն ու գնահատման արդյունքում
2. Մշակել ոռոգման ջրի որակի ստանդարտ
3. Հանգստի գոտիները՝ հանգստյան տները, ռեստորանները, հյուրանոցները վերազինել կենցաղային կեղտաջրերի մաքրման լոկալ կայաններով, /ըստ «Ջինջ» ընկերության հաշվարկների՝ մաքրման կայանի 3-ից 5 տարվա կտրվածքով հետգնման ծախսերը միջին մեկ հանգստացողի համար կազմում է օրական 75-100 դրամ/
4. Ներդնել մաքրված կեղտաջրերի նպատակային վերաօգտագործման համակարգ, կեղտաջրերն այդ ենթատեքստում դիտարկել ոչ թե որպես թափոն, այլ որպես ջրային ռեսուրս
5. Կեղտաջրերի մաքրման համար առաջնորդվել «Այսօր մաքրել այնքան, որքան կարող ենք» կարգախոսով՝ դրան հասնելու համար ներդնելով ցանկացած նախաձեռնության աջակցության և խթանման մեխանիզմներ
6. ՀՀ կառավարության 2003 թվականի հուլիսի 10-ի «Կեղտաջրերի և ցամաքուրդային ջրերի ընդունման համար կլանող հորատանցքերի, սպառված հանքավայրերի, հանքահորերի ու բաց հանքերի օգտագործման և արտահոսքի թույլտվության կարգը հաստատելու մասին» N 982-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչել, քանի որ այն հակասում է ՀՀ ջրային օրենսգրքի 104 –րդ հոդվածին, համաձայն որի՝ կեղտաջրերը և ցամաքուրդային ջրերն ընդունելու համար արգելվում է կլանող հորատանցքերի և ջրհորների կառուցումը, և որ դրանցով կեղտոտվում են մակերևութային և ստորգետնյա ջրային ռեսուրսները:

Հրապարակումներ

- ✚ «Կլիմայի փոփոխության ներքո ջրային ռեսուրսների խոցելիությունը և կլիմայի փոփոխության հարմարվողականության պլանավորման բացերը Հայաստանում»¹¹
- ✚ «Ինչ է սպասվում Արարատյան դաշտի արտեզյան ավազանին, Սևանա լճին և գետերին կլիմայի փոփոխության և մարդու ներգործության արդյունքում»¹²
- ✚ «Փորձագետ՝ Հայաստանի բոլոր բնակավայրերի կոյուղացման համար կպահանջվի շուրջ 2,6 միլիարդ եվրո»¹³

¹¹ <https://www.ecolor.org/hy/news/climate-change/13126/>

¹² <https://www.ecolor.org/hy/news/climate-change/13130/>

¹³ <https://www.ecolor.org/hy/news/climate-change/>

5. 2021թ. ապրիլի 13-ին ԷկոԼուր» տեղեկատվական ՀԿ-ում տեղի ունեցած «Պարենային անվտանգությունը և կլիմայի փոփոխությունը» փորձագիտական կլոր սեղան, ընդհանուր թվով՝ 30 մասնակից:



Նկար 6. «Պարենային անվտանգությունը և կլիմայի փոփոխությունը» փորձագիտական կլոր սեղան

Քննարկվեցին հետևյալ հարցերը.

1. «Պարենային անվտանգության համակարգը ՀՀ-ում և իրականացվող պետական քաղաքականությունը», զեկուցող՝ Մագդա Հովհաննիսյան՝ ՀՀ Էկոնոմիկայի նախարարություն, Պարենային անվտանգության և ագրովերամշակման զարգացման վարչության պետի տեղակալ
2. «Կլիմայի փոփոխություն և հողերի դեգրադացիա», զեկուցող՝ Աշոտ Վարդևանյան՝ ՀՀ շրջակա միջավայրի նախարարություն, Պետական կադաստրների, ռեսսորսների վարման և մոնիթորինգի բաժնի պետ
3. «Աղետների ազդեցությունը գյուղատնտեսության վրա», զեկուցող՝ Վահան Ամիրխանյան՝ ՄԱԿ-ի Պարենի և գյուղատնտեսության կազմակերպություն, Թիմի ղեկավար/գյուղատնտեսության հարցերով ազգային փորձագետ
4. «Սևանա լճի կենսառեսուրսների արդի վիճակը կլիմայի փոփոխության պայմաններում», զեկուցող՝ Բարդուխ Գաբրիելյան՝ ՀՀ ԳԱԱ կենդանաբանության և հիդրոէկոլոգիայի կենտրոնի տնօրեն
5. «Կլիմայի փոփոխության պայմաններում ռացիոնալ հողօգտագործման և ջրօգտագործման խնդիրները», զեկուցող՝ Արևիկ Հովսեփյան՝ «Ազգային ջրային համագործակցություն» Էկոլոգիական ՀԿ-ի նախագահ
6. «Կլիմայի փոփոխություն և ռացիոնալ գյուղատնտեսություն», զեկուցող՝ Նունե Սարուխանյան, «Կանաչ արահետ» ՀԿ-ի նախագահ

Մագդա Հովհաննեսյանն իր զեկույցում բնակչության պարենային անվտանգության ապահովման համատեքստում նշեց գյուղատնտեսության և ագրովերամշակող արդյունաբերության կարևորությունը և ՀՀ կառավարության կողմից ձեռնարկած քայլերը դրանց արդյունավետության բարձրացման ոլորտում: Բանախոսը

նշեց, որ ներկայումս ՀՀ կառավարության ծրագրով վերահաստատվել են տնտեսական զարգացման երեք հիմնական առաջնահերթություններ, որոնցից մեկը գյուղատնտեսությունն է: Վերջին 5 տարում երկրի համախառն ներքին արդյունքում գյուղատնտեսության մասնաբաժինը կազմել է մոտ 15,0 %, իսկ ագրովերամշակմանը՝ 11%,0: Նա անդրադարձավ վերջին 2 տարիներին ագրոպարենային արտադրանքի ցուցանիշներին, որոնք, ըստ նրա, հուսադրող են: Մասնավորապես, Մագդա Հովհաննեսյանը նշեց, որ 2019 թվականի տվյալներով այդ արտադրանքի ինքնաբավարարման բարձր մակարդակ են ապահովել՝ մրգերը և հատապտուղները (104,2 %), բանջարեղենը (102,45 %), խաղողը (103,6 %), ոչխարի և այծի միսը (113,8 %), (100,0 %), կարտոֆիլը (101,1 %), բոստանային մշակաբույսերը (98,9 %), որոշ տեսակներ ունեն միջինից բարձր ցուցանիշներ: Նա նշեց նաև, որ որոշ կարևորագույն սննդամթերքների՝ հատիկաբնդեղենի, ցորենի, բուսական յուղի, կարագի, թռչնի միսի պարենապահովումը հիմնականում տեղի է ունենում ներկրման հաշվին:

Նա ներկայացրեց գյուղատնտեսության կայուն զարգացման և պարենային անվտանգության ապահովման նպատակով այն օրենսդրական հենքը, որով ՀՀ կառավարությունը ներկայումս առաջնորդվում է /2019 թվականի դեկտեմբերի 19-ի N 1886-Լ որոշում, դրա կատարմանն ուղղված 2020-2022 թվականների միջոցառումների ծրագիր և ժամանակացույց, ՀՀ պարենային անվտանգության ապահովման հայեցակարգից բխող միջոցառումների 2017-2021 թվականների ռազմավարությունն ապահովող գործողությունների ծրագիր/:

Բանախոսը ներկայացրեց, որ գյուղատնտեսության և վերամշակող արդյունաբերության զարգացման, արդիական տեխնոլոգիաների ներդրման, գյուղացիական տնտեսությունների եկամուտների ավելացման, ինքնաբավության մակարդակի բարձրացման նպատակով ՀՀ էկոնոմիկայի նախարարության կողմից իրականացվում են անասնապահության ոլորտի և ջերմոցային տնտեսությունների զարգացման, գյուղատնտեսական տեխնիկայի և սարքավորումների լիզինգի, գյուղատնտեսության ոլորտին և գյուղատնտեսական հումքի մթերումների (գնումների) նպատակով տրամադրվող վարկերի տոկոսադրույքների սուբսիդավորման, խաղողի և ինտենսիվ պտղատու այգիների հիմնման, ռոռգման արդիական համակարգերի ներդրման, աշնանացան ցորենի արտադրության խթանման, գարնանացան հացահատիկային, հատիկաբնդեղենի և կերային մշակաբույսերի արտադրության խթանման, տնտեսավարողներին մինչև 1 մլն դրամ գրոյական տոկոսադրույքի վարկավորման և այլ պետական աջակցության ծրագրեր: Վերջում բանախոսը ներկայացրեց գյուղատնտեսության ոլորտի պետական աջակցության ծրագրերի քարտեզն՝ ըստ ՀՀ մարզերի:

Աշոտ Վարդևանյանն անդրադարձավ հողերի դեգրադացիայի և կլիմայի փոփոխության ուղղակի կապին, չեզոք դեգրադացիայի հասնելու ուղղությամբ Հայաստանի ձեռնարկած քայլերին, ինչպես նաև պարենային անվտանգության համաատեքստում ներկայացրեց հողային ռեսուրսների պահպանության կարևորությունը:

Ըստ նրա՝ Հայաստանում դեգրադացիայի է ենթարկվում երկրի տարածքի 86 տոկոսը, անապատացման՝ 44 տոկոսը: Սակայն տարիներ շարունակ հողերն անտեսվել են որպես կայուն զարգացման բաղադրիչ: Միայն 2015թ. կայացած կայուն զարգացման գազաթաժողովից հետո այդ մոտեցումը փոխվեց:

Աշոտ Վարդևանյանն անդրադարձավ նաև Շրջակա միջավայրի նախարարության կողմից ՀՀ կառավարության հաստատմանը ներկայացրած ենթաօրենսդրական հետևյալ ակտերին՝

- 2019 թվականի ապրիլի 1-ի ՀՀ կառավարության «ՀՀ ցամաքային տարածքի ծածկույթի դասակարգման կարգը» N 431-Ն որոշում /նպատակը՝ հողերի մոնիթորինգի իրականացման ճանապարհով հասնել հողերի չեզոք դեգրադացիայի/:

- 2020թ. դեկտեմբերի 10-ի ՀՀ կառավարության «ՀՀ ցամաքային տարածքի ծածկույթի դասակարգման մասին» N2015-N որոշում / որոշմամբ այդ կարգի հողերը դասակարգվել են 6 դասի և ըստ այդ դասերի յուրաքանչյուր մարզի համար ներկայացված են դրանց ելակետային մակերեսները: Դրանց ամենամյա մոնիտորինգը հնարավորություն կտա դիտարկել փոփոխությունների դինամիկան/:

- Շրջակա միջավայրի նախարարությունը մշակել և ՀՀ կառավարության քննարկմանն է ներկայացրել «ՀՀ հողերի դեգրադացիայի չեզոքացման ծրագիրը հաստատելու մասին» կառավարության որոշման նախագծի փաթեթը, և որի ընդունմամբ կապահովվի հողային պաշարների պահպանությունը, կայուն օգտագործումը, ինչպես նաև բնական էկոհամակարգերի կառավարման խնդիրների լուծումը: /2021թ-ի մայիսի 6-ին ՀՀ կառավարությունն ընդունեց «Հայաստանի Հանրապետությունում հողերի դեգրադացիայի չեզոքացման ծրագիրը հաստատելու մասին» 725-Լ որոշումը/:

Անդրադառնալով առաջիկա տարիներին իրականացվելիք ծրագրերին՝ Աշոտ Վարդևանյանը նշեց, որ 2021-2024թթ. Գլոբալ էկոլոգիական հիմնադրամի ֆինանսական աջակցությամբ ՄԱԿ-ի Պարենի և գյուղատնտեսության կազմակերպությունն իրականացնելու է «Հայաստանի հողերի դեգրադացիայի չեզոքացման շրջանակներում հանձնառությունների, պարտականությունների իրականացում դեգրադացված մարգագետինների կայուն կառավարման միջոցով» ծրագիրը: «Այս ծրագրով ոչ միայն նախատեսվում է մարգագետինների, այլև վարելահողերի վերականգնում: Ծրագիրը կիրականացվի Լոռու և Սյունիքի մարզերի՝ խոշորացված Թումանյան և Գորայք համայնքներում: Կանաչ կլիմայի հիմնադրամի ֆինանսավորմամբ էլ 2021-2029թթ. իրականացվելու է «ՀՀ անտառների կայունության, հարմարվողականության և գյուղական զարգացման բարելավման և մեղմման միջոցով» ծրագիրը, որի շրջանակներում կիրականացվի անտառվերականգնում և անտառպատում:

Վահան Ամիրխանյանը նշեց, որ բնական աղետները վերջին տարիներին ավելի հաճախ են տեղի ունենում, սպառնում են կայուն զարգացման երեք՝ սոցիալական, բնապահպանական և տնտեսական հենասյուներին, այդ թվում նաև գյուղատնտեսությանը: Նա նշեց, որ պատմության մեջ դեռևս ագրոպարենային համակարգերն այսքան նոր և աննախադեպ աղետների հետ չեն առերեսվել, վտանգվում է սննդի ամբողջ համակարգը, աղետները դուրս են գալիս տնտեսական տիրույթից և կորստաբեր հետևանքներ ունենում պարենային անվտանգության և սնուցման վրա:

Կլիմայի փոփոխության հետևանքով տեղի են ունենում եղանակային ծայրահեղ երևույթներ, մեծ տարածում են ստանում վնասատուները և հիվանդությունները, տեղի է ունենում կենսաբազմազանության կորուստ, դեգրադացվում են էկոհամակարգերը, առաջանում է սակավաջրություն:

Ըստ բանախոսի՝ Հայաստանում մինչև 2100թ. կանխատեսվում է՝ 200-400մ-ով ագրոկլիմայական գոտիների տեղաշարժ, մշակաբույսերի բերքատվության նվազում, հողերի դեգրադացիայի ուժեղացում և բերրիության անկում, հիդրոոդերնութաբանական վտանգավոր երևույթների բացասական ազդեցության մեծացում:

Նա նշեց, որ աղետների կրկնվելու հաճախականությունը 2010 թվականին ավելացել է երեք անգամ 1970 և 1980 թվականների համեմատությամբ: Ըստ հաշվարկների՝ աղետների պատճառով տնտեսական կորուստները 2010-ականներին կազմել են տարեկան միջինը 170 միլիարդ ԱՄՆ դոլար:

Վահան Ամիրխանյանն անդրադարձավ Հայաստանի՝ բնական վտանգների բարձր ռիսկային գոտում գտնվելու հանգամանքին, երկրին սպառնացող վտանգներին և երկրագործության տեսանկյունից ծայրահեղ ռիսկային երկրների շարքին դասվելու հանգամանքին: Նշեց գյուղատնտեսության հետ կապված իրենց կազմակերպության կողմից ուսումնասիրված՝ աղետների ռիսկերի նվազեցման ներկա վիճակի, վաղ նախագգուշացման համակարգերի և ագրոոդերնութաբանական ծառայության ներկայիս վիճակի, ՀՀ համապատասխան օրենսդրական բացերի, իրականացվող քաղաքականության, ունեցած կարողությունների և ծառայությունների մասին: Ըստ իրենց վերլուծության՝ հանգել են այն եզրակացության, որ երաշտների, խորշակների, կարկտահարության, վաղ գարնանային ցրտահարությունների հաճախականությունը և ինտենսիվությունը վերջին տասնամյակներում կլիմայի փոփոխության համատեքստում ունի աճման միտում:

Այդ վերլուծությունների արդյունքներով մշակվել են հետևյալ առաջարկությունները, որոնք մոտ ժամանակներս կներկայացվեն ՀՀ կառավարություն.

- Գյուղատնտեսության ոլորտի համար մշակել և ներդնել աղետների ռիսկերի կառավարման ռազմավարություն
- Ոլորտում աղետների ռիսկերի կանխատեսման, կանխարգելման, նախապատրաստման և արձագանքման համար իրականացնել բազմավտանգ և բազմակողմանի համակարգային ռիսկերի կառավարման մոտեցում
- Ոլորտային փաստաթղթերը պետք է ներառեն ոչ միայն բնական վտանգները, այլև մարդածին և կենսաբանական սպառնալիքները
- Մշակել և որդեգրել աղետների ռիսկերի նվազեցման/մեղմացման կառավարման և համակարգման ստանդարտ ընթացակարգեր, որոնք կիրառելի կլինեն նաև գյուղատնտեսության ոլորտում
- Մշակել և ներդնել գյուղատնտեսության ոլորտում աղետների ռիսկերի նվազեցման ու մեղմացման և կլիմայի փոփոխությունների՝ հարմարողականության ուղղությամբ գյուղատնտեսության լավագույն փորձը՝ այդ թվում խելացի կլիմայական գյուղատնտեսության գործելակերպերը
- Ստեղծել աղետների ռիսկերի նվազեցման/մեղմացման և կլիմայի փոփոխությունների հարմարողականության մոդելների և տեղական և միջազգային լավագույն փորձի դեպոզիտարիա
- Ներդնել աղետների ռիսկերի վաղ նախագգուշացման համակարգեր՝ այդ թվում կենսաբանական աղետների (բույսերի հիվանդություններ և վնասատուներ, անասունների հիվանդություններ)

- Ներդնել գյուղատնտեսության ոլորտում աղետների հետևանքով առաջացած վնասների և կորուստների գնահատման համակարգ

Բարդուխ Գաբրիելյանը նշեց, որ Շրջակա միջավայրի նախարարության հետ կնքած պայմանագրի շրջանակներում ՀՀ ԳԱԱ կենդանաբանության և հիդրոէկոլոգիայի կենտրոնն իրականացնում է Սևանա լճում ձկան և խեցգետնի պաշարների ամենամյա գնահատում:

Համաձայն կատարված ուսումնասիրությունների արդյունքների՝ Սևանա լճում էականորեն նվազել է ձկան պաշարը: Եթե 2013-2018թթ. ընթացքում ձկան ընդհանուր կենսազանգվածը տարեցտարի աճել է, 1296 տոննայից հասնելով 2948 տոննայի, ապա 2018թ. հետո նվազել է՝ 2019թ. կազմելով 2668 տոննա, 2020թ.՝ 2345 տոննա: Նույն կերպ նվազել է նաև ձկան արդյունագործական պաշարը՝ կազմելով համապատասխանաբար՝ 667 և 586 տոննա: «Արդյունագործական կենսազանգվածը կազմում է ընդհանուր պաշարի 20-25%-ը: Նվազումը կախված է եղել հիմնականում ոչ կառավարելի որսի և բազմացման պայմանների վատացման հետ: Մեր կենսառեսուրսները պետք է դիտենք, ոչ միայն որպես սննդի աղբյուր, այլ՝ որպես լճային էկոհամակարգի վերին օղակ, որոնք ճիշտ կառավարման դեպքում թույլ կտան բարելավել Սևանա լճի ջրի որակը:

Խեցգետնի պաշարների նվազման հիմնական պատճառներից են եղել կլիմայի փոփոխության ազդեցության հետևանքով ի հայտ եկած հիվանդությունները. բարենպաստ պայմաններ են ստեղծվել ձկների և խեցգետնի վրա ազդող մակաբույծների համար:

Բանախոսը ներկայացրեց նաև լճի էկոհամակարգի բուրգը, որի վերնի հատվածում են ձկները, այնուհետ գալիս են անողնաշար կենդանիները՝ զոոպլանկտոնը և զոոբենթոսը: Ամենաներքևում գտնվում են բուսական աշխարհի ներկայացուցիչները՝ ի դեմս ֆիտոպլանկտոնի, մակրոֆիտների և այլն: Նա անդրադարձավ վերջին տարիներին Սևանա լճում դիտված տոքսիկ կապտակապանաչ ջրիմուռների բուռն ծաղկման երևույթի պատճառահետևանքային կապին, որն է կլիմայի փոփոխության հետ կապված ջերմաստիճանի բարձրացումը և ջրահավաք ավազանից կենսածին տարրերի ներմուտքի ավելացումը:

Քանի որ կլիմայի փոփոխությունը հնարավոր չէ կանխել, առաջարկում է նվազեցնել նրա ազդեցությունը երեք ուղղությամբ՝ ջրի մակարդակի բարձրացում, ջրահավաք ավազանից կենսածին տարրերի մուտքի նվազեցում, կենսառեսուրսների կառավարելի որս: Դա թույլ կտա ունենալ կենսառեսուրսների այնպիսի քանակ, որ կարող ենք օրգանական նյութերի ավելցուկը Սևանա լճից արտահանել ձկան կամ խեցգետնի ձևով: Այս պատկերը շտկելու համար, անհրաժեշտ է մշակել նոր համալիր ծրագիր, որը կընդգրկի տնտեսության տարբեր ոլորտներ:

Արևիկ Հովսեփյանյանը նշեց, որ, ըստ իրենց հետազոտությունների, մեր հողատարածքների 50%-ից ավելին չի մշակվում, ինչի արդյունքում բազմաթիվ մշակովի հողատարածքներ դեգրադացվում են, հողերի որակը վատանում է, հողը դառնում է ոչ պիտանի մշակման համար: Իսկ դրա պատճառները շատ են՝ անհատական հողատարածքների կատեգորիաների անհամասեռություններ և մասնատվածություն, ոռոգման ջրի բացակայություն, ոռոգման ջրի ստանդարտների բացակայություն, համայնքներում խմելու ջուրը որպես ոռոգման ջուր օգտագործելը, անգամ կոյուղաջրերի

օգտագործում ոռոգման նպատակով, հողային հուներով ոռոգման համակարգերի հոսակորուստներ: Ընդգծեց կեղտաջրերի կենսաբանաքիմիական մաքրման կայանների բացակայությունը և դրանց վերականգնման անհրաժեշտությունը: Անդրադարձավ իրենց կազմակերպության կողմից Տավուշի մարզի յոթ համայնքներում կատարած ուսումնասիրություններին, որի ժամանակ պարզել են, որ վերջին երեք տարիներին աղբյուրներում ջրի քանակը խիստ նվազել է և որ կլիմայի փոփոխության ազդեցությունն արդեն իսկ տեսանելի է: Անդրադարձ կատարվեց ջրային ռեսուրսների ամփարման, գյուղատնտեսական վարկերի տրամադրման ժամանակ նախատեսվող մշակաբույսերի վերաբերյալ գյուղացիներին խորհրդակցության տրամադրման, վերջին տարիներին մասնակցային կառավարումից հեռացած ջրօգտագործողների ընկերությունների կառավարման խնդիրներին:

Նույն Սարուխանյանը նշեց, որ իրենց կազմակերպության գործունեության նպատակը գյուղացուն օգնության ցուցաբերումն է, դեպի կայուն և կանաչ գյուղատնտեսություն ուղղորդումը, որը պետք է արդարացված լինի սոցիալական, տնտեսական և բնապահպանական տեսանկյունից: Միաժամանակ նշեց, որ իրենց կազմակերպության ուսումնական կենտրոններում նաև բազմացնում են ՀՀ բույսերի՝ կարմիր գրքում գրանցված և անհետացման եզրին գտնվող վայրի ուտելի բույսեր՝ փորձելով դրանք ֆերմերների համար դարձնել եկամտի լրացուցիչ աղբյուր, դրանցով փոխարինելով ավանդական կանաչեղենը:

Նա նշեց, որ կլիմայի փոփոխությունն ու բնական աղետները երբեմն անդառնալի հետևանք են թողնում գյուղատնտեսության ոլորտի վրա, սակայն այդ ուղղությամբ հնարավոր է որոշակի քայլեր իրականացնել: Մասնավորապես, այդ ազդեցությունը մեղմելու նպատակով ֆերմերներին պետք է առաջարկել աճեցնել այլ բույսեր, այլ սորտեր, վաղահաս և միջահաս տեսակներ: Նա ներկայացրեց, որ իրենց կազմակերպությունը Հայաստանի տարբեր մարզերում նախատեսում է ստեղծել խելամիտ գյուղատնտեսության ուսուցման կենտրոններ, իսկ արդեն իսկ իրականացված ծրագրերի հետ համագործակցող ֆերմերներն այսօր կարողանում են հեշտությամբ հաղթահարել կլիմայի փոփոխության և աղետների առաջացրած խնդիրները: Մասնավորապես, ֆերմերներին սովորեցրել են կոշտ ջրերն ավելի փափուկ դարձնելու տեխնոլոգիան, որ բարձր թթվածնային ցուցիչ ունեցող հողերից հնարավոր է ստանալ հապալասի բարձր բերք: Հնարավոր է ամեն ինչ, եթե գյուղացիները սովորեն տարբեր հնարքներ:

Նա նշեց, որ իրենց կողմից ստեղծվող ուսումնական կենտրոններում ուսուցման մոդուլներից բացի ֆերմերների համար պատրաստել են բազմաթիվ ուղեցույցներ ու բուկլետներ գյուղատնտեսության վերաբերյալ, անդրադարձել են երաշտի պայմաններում գյուղատնտեսության վարմանը, ցրտահարված այգիների վերականգնմանը, որոշակի բերք ստանալու համար ծառերի էտմանը:

Ըստ բանախոսի՝ 2019թ. ընթացքում շուրջ 5000 ֆերմեր, ուսանող ու մասնագետ է մասնակցել իրենց ծրագրերին Հայաստանից ու արտերկրից Հայաստանի կենսաբազմազանությանն ու ագրոբազմազանությանը ծանոթանալու նպատակով

Հրապարակումներ

- ✚ «Պարենային անվտանգության համակարգը ՀՀ-ում և իրականացվող պետական քաղաքականությունը»¹⁴
- ✚ «Հայաստանում դեգրադացիայի է ենթարկվում երկրի տարածքի 86 տոկոսը»¹⁵
- ✚ «Կլիմայի փոփոխությունը և ՀՀ գյուղատնտեսության ոլորտին սպառնացող աղետները»¹⁶
- ✚ «Բարդուխ Գաբրիելյանը՝ Սևանա լճի կենսատեսուրսների մասին»¹⁷
- ✚ «Հայաստանում գյուղատնտեսական նշանակության հողերը չմշակելու պատճառները»¹⁸
- ✚ «Ինչպես խելամիտ գյուղատնտեսություն վարել կլիմայի փոփոխության պայմաններում, «Կանաչ Արահետ» ՀԿ-ի փորձը»¹⁹

6. 03.05.2021թ. «ԷկոԼուր» տեղեկատվական ՀԿ-ի գրասենյակում տեղի ունեցած «Կլիմայական կարգավորիչ դեր ունեցող Հայաստանի անտառների խնդիրները և լուծումները» փորձագիտական կլոր սեղան, ընդհանուր թվով՝ 15 մասնակից:



Նկար 7. «Կլիմայական կարգավորիչ դեր ունեցող Հայաստանի անտառների խնդիրները և լուծումները» փորձագիտական կլոր սեղան

Քննարկվեցին հետևյալ հարցերը՝

1. «Անտառների կառավարում՝ խնդիրներ և լուծումներ», զեկուցող՝ ՀՀ շրջակա միջավայրի նախարարության անտառային կոմիտեի նախագահի տեղակալի պաշտոնակատար Արուսյակ Միրադեղյան
2. «Հայաստանի անտառների կայունություն՝ գյուղական համայնքներում կանաչ աճի մեղմման և հարմարվողականության խթանում», զեկուցող՝ ՀՀ բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնի կենսաբազմազանության վերահսկողության վարչության բուսական աշխարհի վերահսկողության բաժնի պետ Միքայել Սանթրոսյան

¹⁴ <https://www.ecolor.org/hy/news/officials/13143/>

¹⁵ <https://www.ecolor.org/hy/news/climate-change/13148/>

¹⁶ <https://www.ecolor.org/hy/news/climate-change/13159/>

¹⁷ <https://www.ecolor.org/hy/news/climate-change/13158/>

¹⁸ <https://www.ecolor.org/hy/news/climate-change/13163/>

¹⁹ <https://www.ecolor.org/hy/news/climate-change/13164/>

3.«Անտառների մոնիթորինգ՝ դեգրադացում, հիվանդություններ, հատումներ», զեկուցող՝ ՀՀ շրջակա միջավայրի նախարարության «Հիդրոօդերևութաբանության և մոնիթորինգի կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրենի տեղակալ Արման Ավագյան

4.«Անտառային ոլորտ՝ միջազգային ծրագրերի արդյունավետությունը», զեկուցող՝ «Հայաստանի անտառների կայունություն՝ գյուղական համայնքներում կանաչ աճի մեղմման և հարմարվողականության խթանում» ծրագրի կլիմայի փոփոխության գծով միջազգային փորձագետ Իրինա Ղափլանյան

5. «Անտառի վիճակի վերաբերյալ հասարակական գնահատական», զեկուցող՝ «Հայաստանի անտառներ» ՀԿ-ի տնօրեն Նազելի Վարդանյան

ՄԱԶԾ Կլիմայի փոփոխության ծրագրերի համակարգող Դիանա Հարությունյանն իր ողջունի խոսքում կարևորեց Հայաստանի անտառային ռեսուրսների վերականգնման և բարելավման հարցը Փարիզի համաձայնագրի նպատակների ներքո Հայաստանի կողմից վերցրած պարտավորությունների շրջանակներում և այդ ոլորտում տարվող աշխատանքներում միջազգային համայնքի աջակցության ներգրավման ջանքերը: Նա նշեց, որ 2021 թվականի ապրիլի 22-ին Փարիզի համաձայնագրի ներքո Հայաստանի Հանրապետությունն իր ներկայացրած թարմացված դիրքորոշման մեջ հստակ վերցրել է անտառապատ տարածքները ավելացնելու պարտավորություններ: Կարևորեց մարդկանց շրջանում այն գիտակցության արմատավորումը, որ անտառը փայտ չէ, այլ առաջին հերթին կենսաբազմազանություն է, որ այն ունի ջրային ռեսուրսների հոսքի կառավարման, հողապաշտպան և արտակարգ իրավիճակները մեղմող գործառնություն:

Միքայել Սանթրոսյանն անդրադարձավ վերջին տարիներին Բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնի կողմից անտառային ոլորտում հայտնաբերված խախտումներին և դրա գործիքակազմի հզորացմանն ուղղված օրենսդրական բարեփոխումներին:

Նա նշեց, որ 2018 և 2020 թվականներին նախորդ տարիների համեմատությամբ նվազել են ապօրինի ծառահատումները. 2017թ. հայտնաբերվել է 30 հազարից ավելի ծառի ապօրինի հատման և 892 խմ ապօրինի փայտանյութի տեղափոխման, 2018թ.՝ 12 հազար ծառի և 821 խմ ապօրինի փայտանյութի տեղափոխման, 2019թ. 16 հազար 800 ծառի և 3192 խմ տեղափոխման, 2020թ.՝ 12 հազար 978 ծառի և 1646,4 խմ ապօրինի փայտանյութի տեղափոխման դեպք:

Նշեց ապօրինի ծառահատումների փաստով հարուցված քրեական, այդ թվում «Թեղուտ» ՓԲԸ-ի կողմից հատված անտառանյութի շարժի վերաբերյալ, գործերի, քննիչների կողմից մասնագիտական ստուգում նշանակելու մասին որոշումների, տեսուչների կողմից շուրջօրյա վերահսկողության կազմակերպման մեխանիզմների մշակման, Տեսչական մարմնի նյութատեխնիկական բազայի հզորացման մասին:

Քննարկման մասնակիցների կողմից բարձրացվեցին տարաբնույթ հարցեր, կապված սեփականաշնորհված, վարձակալության, պայմանագրային հիմունքներով

տրված տարածքներում առկա կենդական և բուսական աշխարհի տեսակների նկատմամբ տեսչական վերահսկողության՝ օրենսդրական արգելքի և օրենսդրական փոփոխություններով համապատասխան մեխանիզմների ներմուծման անհրաժեշտության մասին: Հնչեց միտք այն մասին, որ վերջին շրջանում անտառխախտման դեպքերի հայտնաբերման նվազման միտումը ոչ թե կապված է խախտումների թվի նվազման, այլ ՀՀ-ում ստեղծված իրավիճակով պայմանավորված Տեսչական մարմնի աշխատանքների ոչ բնականոն կազմակերպման հետ:

Արուսյակ Սիրադեղյանն իր ելույթում նշեց, որ անտառային կառավարումն ավելի արդյունավետ դարձնելու համար ՀՀ շրջակա միջավայրի նախարարության կազմում 2018թ. ստեղծվել է Անտառային կոմիտեն, իսկ ներկայումս Անտառային օրենսգրքում նախատեսվում է փոփոխություն, համաձայն որի կձևավորվի անտառային ծառայություն, որի նպատակն անտառի պահպանությունն օգտագործումից տարանջատելն է և առավել արդյունավետ անտառների պահպանության իրականացումը:

Նա նշեց 2019-2020թթ. պետական բյուջեի ֆինանսավորմամբ /1264 հա, որից 273 հա տարածքում՝ ցանքի ու տնկման միջոցով, 991 հա տարածքում՝ անտառի բնական վերաճի օժանդակման միջոցով/, ինչպես նաև ՄԱԿ-ի Զարգացման Ծրագրի աջակցությամբ 2018-2020թթ. ընթացքում /ավելի քան 5000 հա անտառվերականգնման աշխատանքների՝ անտառի բնական վերաճի օժանդակման միջոցով/ Անտառային կոմիտեի «Հայաստան» ՊՈԱԿ-ի «Անտառտնտեսություն» մասնաձյուղերում կատարված անտառվերականգնման ու անտառապատման աշխատանքների մասին:

Բանախոսը նշեց «Հայաստան» ՊՈԱԿ-ի տնկարաններում շուրջ 2 միլիոն տնկանյութի աճեցման, ինչպես նաև 2021թվականին մեկնարկող և Պարենի և գյուղատնտեսության կազմակերպության Կանաչ կլիմայի հիմնադրամի (GCF) կողմից ֆինանսավորվող «Հայաստանի անտառային կայունություն» ծրագրի շրջանակներում Հայաստանի Լոռու և Սյունիքի մարզերի անտառային հողերում և համայնքային տարածքներում առաջիկա տարիներին նախատեսվող լայնածավալ անտառվերականգնման ու անտառապատման, ինչպես նաև փակ արմատային համակարգով տնկանյութի աճեցման ժամանակակից տնկարանային համալիրների հիմնադրման մասին:

Արուսյակ Սիրադեղյանը Բանախոսը տեղեկացրեց, որ պետական բյուջեի ֆինանսավորմամբ 2020թ. մշակվել են «Հայաստան» ՊՈԱԿ-ի «Սիսիանի» և «Ճամբարակի» անտառկառավարման պլանները, իսկ մշակման փուլում է «Սևքարի» մասնաձյուղի անտառկառավարման պլանը, ՄԱԿ-ի Զարգացման Ծրագրի գրասենյակի ֆինանսավորմամբ 2018-2020թթ. ընթացքում մշակվել են «Ստեփանավանի», «Տաշիրի», «Զիլիզայի», «Վանաձորի», «Իջևանի» և «Նոյեմբերյանի» անտառտնտեսություն մասնաձյուղերի անտառկառավարման պլանները:

Ըստ Սիրադեղյանի՝ անտառների կադաստրի վարման նպատակով 2019 թվականից պետական բյուջեից հատկացվում է տարեկան 15 միլիոն դրամ: 2019-2020թթ. անտառների կադաստրի վարման նպատակով ձեռք են բերվել ամենագնաց մեքենա, անօդաչու սարք, համակարգչային տեխնիկա ու սարքավորումներ: Իսկ 2021թ. նախատեսվում է ձեռք բերել անտառների կադաստրի վարման համակարգչային ծրագիր, ինչպես նաև որոշ տեխնիկական միջոցներ ու սարքավորումներ:

Որպես դրական արդյունք Արուսյակ Միրադեղյանը նշեց, որ անտառպահպանության աշխատողների համար պետական բյուջեի ֆինանսավորմամբ 2019թ. ձեռք է բերվել ամառային և ձմեռային արտահագուստ, իսկ արդեն 2021թ. միջինում 30 տոկոսով բարձրացվել են «Հայանտառ» ՊՈԱԿ-ի ու մասնաճյուղերի աշխատողների աշխատավարձերը:

Իրինա Ղափլանյանն իր ելույթում անդրադարձավ 2021թ-ի աշնանը մեկնարկվելիք՝ «Հայաստանի անտառների կայունություն՝ գյուղական համայնքներում կանաչ աճի մեղմման և հարմարվողականության խթանում» ծրագրին, համաձայն որի նախատեսվում է 2,5%-ով ընդլայնել Հայաստանի անտառածածկը, վառարանների արդյունավետության բարձրացման միջոցով վառելափայտի պահանջը նվազեցնել 30%-ով, հզորացնել կայուն և կլիմայի տեսանկյունից հարմարվողական անտառկառավարում: Ծրագրի բուն տևողությունը կկազմի ութ տարի, սակայն ծրագրի իրականացման արդյունքում հետծրագրային ընթացքը նախատեսված է քսան տարի:

Ընդհանուր Ծրագրի գումարը հասնում է մոտ 18 միլիոն դոլարի: Ֆինանսավորման աղբյուրները մի քանիսն են՝ Կանաչ կլիմայի հիմնադրամ (ուղիղ դրամաշնորհով 10 միլիոն դոլար տրամադրում), Ավստրիայի զարգացման գործակալություն, WWF, Իտալիայի Տորցիանո համայնք (համաֆինանսավորողներ), Հայաստանի կառավարություն (բնեղեն ներդրմամբ): Ըստ բանախոսի՝ իրականացնող մարմինները լինելու են FAO-ի տեղական գրասենյակն ու Շրջակա միջավայրի նախարարության Ծրագրերի իրականացման գրասենյակը:

Այնուհետև, Իրինա Ղափլանյանն անդրադարձավ Ծրագրի հիմնավորմանը՝ կապելով այն կլիմայի փոփոխության և կլիմայի փոփոխության ռիսկերի հետ: Ըստ հետազոտությունների և վերլուծությունների՝ Հայաստանի էներգիայի գլխավոր աղբյուրը հատկապես գյուղական համայնքներում, վառելափայտն է: Գյուղական համայնքներում բնակչության 74%-ը սպառում է վառելափայտ: Գյուղական համայնքներում օգտագործվող վառարանները էներգարդյունավետության շատ ցածր տոկոս ունեն՝ ընդամենը 40%: Այս բոլոր հանգամանքները հաշվի առնելով՝ Ծրագիրը թիրախավորում է և՛ մեղմման, և՛ հարմարվողականության գործողություններ:

Ըստ Իրինա Ղափլանյանի՝ Ծրագիրն ունի մի շարք բաղադրիչներ՝ առաջին տարում երեք տնկարանների ստեղծում, «Հայանտառ» ՊՈԱԿ-ի կարողությունների հզորացում, վեցերորդ տարում մոտ 1700 մարդու՝ «Հայանտառի» աշխատակից, տեղական համայնքների, մասնավոր սեկտորի և ՀԿ-ների ներկայացուցիչների համար կլիմայի փոփոխության և անտառվերականգնման թեմաներով դասընթացների կազմակերպում, յոթերորդ տարվա ընթացքում և մինչև տարեվերջ պետք է ունենալ 7300 հա անտառային տարածքներում ներդրումներ, որից 5700 հա տարածքում՝ բուն անտառտնկման աշխատանքներ: Մեկ այլ բաղադրիչով նախատեսվում է երկրորդ տարվա ընթացքում և մինչև տարեվերջ մշակել էներգաարդյունավետության ազգային ստանդարտներ, որոնք կվերաբերեն վառարաններին: Հինգերորդ տարում և մինչև՝ էներգաարդյունավետության տարբեր գործառնություններում մասնագիտացված 15 մասնավոր կազմակերպություններ պետք է արտադրեն վառելափայտ այրող վառարաններ: Վեցերորդ տարում առնվազն 9 հազար ընտանիք կունենա էներգաարդյունավետ վառելափայտի վառարաններ Սյունիքի և Լոռու մարզերում:

Հաջորդ բաղադրիչով նախատեսվում է հինգերորդ տարվա ընթացքում ունենալ ուղեցույց, որը հնարավորություն կընձեռի ավելի արդյունավետ մասնակցություն համայնքների կողմից անտառային կառավարման և էկոհակարգերի կառավարման գործընթացում: «Յոթերորդ տարվա ընթացքում նախատեսվում է Ծրագրի ավարտ և 300 հազար անձ 207 համայնքից կլինի իրազեկված, տեղեկացված և կկարողանա պատշաճ կիրառել այն գիտելիքները, որոնք նախատեսվում է փոխանցել նրանց Ծրագրի ընթացքում: Ութերորդ տարվա ընթացքում կստեղծվի ազգային անտառի մշտադիտարկման և գնահատման համակարգ»,- ասաց Իրինա Ղափլանյանը

Անտառային կոմիտեի խորհրդական Ռուբեն Պետրոսյանը նշեց, որ ՀՀ կառավարության կողմից 2021թ. ապրիլի 22-ին հաստատված Փարիզյան համաձայնագրի ներքո Հայաստանի 2021-2030թթ. վերանայված «Ազգային մակարդակով սահմանված գործողությունները»-ով Հայաստանը վերցրել է մինչև 2030թ. երկրի անտառապատվածությունը 12,9%-ի հասցնելու պարտավորություն: Այդ պարտավորվածության կատարման համար պետք է ավելանա 50 հազար հա նոր անտառ՝ տարեկան 5000 հա նոր անտառի տնկմամբ: Պետք է բարելավվեն աշխատակիցների մասնագիտական կարողությունները, զարգացվելու են տնկարանային տնտեսությունները, աճեցվելու է փակ արմատային համակարգով տնկանյութ: Նա ներկայացրեց «Հայանտառ» ՊՈԱԿ-ի ներկա և նախատեսվող կարողությունները՝ երկու ջերմոց, հետազայում ևս վեցը, տարեկան նախատեսվում է աճեցնել 15 միլիոն տնկանյութ:

Ռուբեն Պետրոսյանի համաձայն՝ 1993թ. անտառների պետական հաշվառման արդյունքներով անտառները և անտառային հողերը կազմում են երկրի տարածքի շուրջ 11.2 %-ը՝ 460 հազար հա, որից 334.1 հազար հա-ն անտառածածկ տարածքներ են: Մինչդեռ անկախ փորձագետների հաշվարկներով՝ Հայաստանում անտառահատումների հետևանքով անտառածածկը կրճատվել է՝ հասնելով մինչև 7-10%-ի: Հետագա տարիների անտառային տարածքներում տեղի ունեցած փոփոխությունների մասին տեղեկատվությունը բացակայում է պաշտոնական փաստաթղթերում:

Ի պատասխան ԷկոԼուրի փորձագետ Վիկտորյա Բուռնազյանի հարցի Ռուբեն Պետրոսյանը նշեց, որ 2030թ. անտառապատվածության 12,9%-ին հասնելու համար հիմք է ընդունվել 11,2 %-ը: Այսինքն՝ անտառածածկը կավելանա 1,7%-ով:

Անդրադառնալով անտառածածկ տարածքների ծավալների անճշտությանը՝ նա նշեց, որ դրա պատճառներից մեկն էլ ժամանակին անտառային հողերը համայնքային հողեր փոխադրելու և հակառակն իրականացված գործողությունների հետևանքն է: «2004թ. համայնքների կադաստր էր արվում, որի ժամանակ պարզվեց, որ մոտ 25 հազար հա անտառային հող և անտառ գնացել է համայնքին որպես ոչ անտառ և համայնքից եկել է ինչ-որ հող, որպեսզի անտառային հեկտարը պահպանվի: Հիմա ունենք համայնքում անտառ, որը նշված է որպես արոտ: Եղել է հնարավորություն, և որպես արոտ վաճառել են, սկսել են կտրել կամ չկտրել ծառերը: Հիմա շտկելով գնում ենք: Անտառտնտեսությունների կառավարման պլանները հաստատելու դեպքում արդեն հստակ կլինի, թե ինչ է եկել հետ և ինչ է գնացել»,- ասաց Ռուբեն Պետրոսյանը:

Նազելի Վարդանյանն իր ելույթում անդրադարձավ անտառների գույքագրման՝ անտառածածկ տարածքների մակերես, անտառների որակական ցուցանիշներ, անտառների լրիվության ցուցանիշ, տեսականի, հրատապության խնդրին, քանի որ, ըստ

նրա, այդ ոլորտում բարեփոխումներ իրականացնելու համար բացակայում են անտառների վերաբերյալ մեկնարկային ցուցանիշները:

Նա փաստեց, որ 1993թ. կատարված անտառների վերջին գյուքագրման համաձայն անտառային ֆոնդը կազմել է 459,9 հազար հա, ինչը կազմում է Հայաստանի տարածքի 11,2%-ը, սակայն 2001թ. NASA-ի՝ տիեզերքից կատարած տվյալների համաձայն՝ Հայաստանի տարածքում անտառը զբաղեցնում է 246,099 հա (անտառածածկ է երկրի 7-8%-ը), ըստ FAO-ի 2008թ. հաշվետվության՝ ՀՀ տարածքի 6,8%-ն է կազմում անտառածածկը, չնայած պետական մարմինները շարունակում են նշել 1993թ-ի 11,2%-ը:

Նվազել է նաև անտառների արդյունավետության միջին ցուցանիշը / 3,6-ից իջել է 3-ից ցածր/ և անտառների միջին լրիվությունը /0,55,-ից 0,3/: Փոխվել է անտառների տեսակային կազմը՝ բարձրատեսակ հաճարենու ու կաղնու անտառները վերածվել են ցածրատեսակ բոխուտների և դաժուտների: Նա անդրադարձավ նաև վերջին տարիներին խնամքի և սանիտարական հատումների հաստատված պաշարների և թույլատրվածից իրականում 15-20 անգամ ավել կատարված հատումների և դրանց կանխարգելմանն ուղղված անարդյունավետ վերահսկողության, անտառային ոլորտի վերաբերյալ տեղեկատվության ոչ թափանցիկ լինելու փաստերին: Անդրադարձավ նաև զանգվածային ապօրինի հատումների հետևանքներին՝ անտառային էկոհամակարգի ոչնչացում, կլիմայի փոփոխություն, թթվածնի պաշարի նվազում, հողերի դեգրադացիա, անապատացման նպաստում, էկոհամակարգերի ջրակարգավորիչ ֆունկցիաների կորուստ, աղբուրների, վտակների, փոքր լճակների ու ջրաճահճային այլ տարածքների չորացում, կենդանիների ապրելավայրերի և բույսերի աճելավայրերի վատթարացում ու կորուստ, կենսաբազմազանության նվազում, սոցիալական, տնտեսական, դեմոգրաֆիական և մարդու առողջության լուրջ խնդիրներ:

Խոսելով անտառային հողերի կատեգորիայի փոփոխման խնդրի մասին՝ Նազելի Վարդանյանը նշեց ՀՀ կառավարության՝ անտառային հողերի կատեգորիայի փոփոխությունների անվան տակ տարիներ շարունակ ՀՀ անտառների ոչնչացմանը նպաստելու հանգամանքի մասին: Մասնավորապես, որպես օրինակ բերվեց «Թեղուտ» ՓԲԸ-ի կողմից՝ Թեղուտի պղնձամոլիբդենային հանքավայրի շահագործման և ենթակառուցվածքների կառուցման համար գերակա պետական շահի հիմնավորմամբ 357 հա մակերեսով անտառի հատման թույլտվության տրման, ինչպես նաև ընկերության կողմից դրա փոխարեն 714 հա անտառի հիմնման պարտավորության չկատարման իրողությունը: Բերվեց նաև «Հայանտառի» «Էրեբունու» անտառապետության 51 հա-ից 24.42 հա մակերեսով հողամասը ՀՀ կառավարության որոշմամբ Երևան համայնքին Նուբարաշենի նոր աղբավայրի կառուցման նպատակով հանձնելը, ինչպես նաև Իրան-Հայաստան 400կվ 3-րդ էլեկտրահաղորդման օղային գծի և համապատասխան ենթակայանի կառուցման համար 4.26 հա անտառային տարածքի հատկացումը «Արևիք» ազգային պարկի տարածքից: Սյունիքի մարզի Լիճք համայնքի 0.425 հա պետական սեփականություն հանդիսացող անտառային հողերից 0.15 հա հողերի կատեգորիայի փոփոխության օրինակով բերվեց անտառային հողերի կատեգորիաները փոփոխությունը փոքր ՀԷԿ-երի կառուցման համար: Նշեց նաև, որ հրդեհների պատճառով նույնպես կրճատվում են անտառածածկ տարածքները, հիմնավորելով իր միտքը նրանով, որ, ըստ պաշտոնական տվյալների, 2018թ. ընթացքում Անտառային կոմիտեի «Հայանտառ» ՊՈԱԿ-ի 19 անտառտնտեսության մասնաճյուղերում գրանցվել է հրդեհի բռնկման 40 դեպք, ինչի

արդյունքում ոչնչացվել է 232,4 հա անտառային տարածք: Բանախոսն անդրադարձավ նաև անտառների կառավարման ինստիտուցիոնալ խնդիրներին և դրանց լուծմանն ուղղված առաջարկներին, որոնք հրապարակված են «Հայաստանի անտառային էկոհամակարգի խախտումների վերաբերյալ» բնապահպանական հանրային գործի վերաբերյալ» Բնապահպանական հանրային դատարանի վճռում²⁰:

Հրապարակումներ

- ✚ «Արդյո՞ք Հայաստանում նվազել են ապօրինի անտառահատումները»²¹
- ✚ «Անտառի կառավարման խնդիրներն ու բարեփոխումները վերջին երեք տարիների ընթացքում»²²
- ✚ «Նոր ծրագիրը նախատեսում է 2,5%-ով ընդլայնել Հայաստանի անտառածածկը, 30%-ով նվազեցնել վառելափայտի պահանջը»²³
- ✚ «Հայաստանը պարտավորվել է մինչև 2030թ-ը 50 հազար հա անտառ տնկել»²⁴
- ✚ «Հայաստանում անհապաղ պետք է կատարել անտառների գույքագրում, մենք այսօր չգիտենք՝ ինչ ունենք». Էկոլոգ-իրավաբան Նազելի Վարդանյան²⁵

7. Լուսաբանվել է 2021 թվականի ապրիլի 27-ին Երևանում տեղի ունեցած աշխատաժողովը, որտեղ ներկայացվել են «Հարմարվողականության ազգային ծրագիր՝ Հայաստանում միջնաժամկետ և երկարաժամկետ հարմարվողականության պլանավորման առաջխաղացման համար»՝ ՄԱԶԾ-ԿԿՀ 00104267 ծրագրի շրջանակներում կլիմայի փոփոխության համատեքստում ոռոգման նորմերի արդիականացմանն ուղղված հետազոտության արդյունքները



Նկար 8. Հարմարվողականության ազգային ծրագիր՝ Հայաստանում միջնաժամկետ և երկարաժամկետ հարմարվողականության պլանավորման առաջխաղացման համար»՝ ՄԱԶԾ-ԿԿՀ 00104267 ծրագրի շրջանակներում կլիմայի փոփոխության համատեքստում ոռոգման նորմերի արդիականացմանն ուղղված հետազոտության արդյունքների ներկայացում

Համաժողովում քննարկվել են Հայաստանում կլիմայի փոփոխության համատեքստում ոռոգման նորմերի արդիականացման և ջրային ոլորտի հարմարվողականության ծրագրի մշակման աշխատանքներին վերաբերող

²⁰

<https://www.ecolur.org/files/uploads/2019/COURT%20DECISION%202019/publicenvironmentalcourtforestinalwitsignatures.pdf>

²¹ <https://www.ecolur.org/hy/news/officials/13188>

²² <https://www.ecolur.org/hy/news/climate-change/13181/>

²³ <https://www.ecolur.org/hy/news/forest/13200/>

²⁴ <https://www.ecolur.org/hy/news/climate-change/13195/>

²⁵ <https://www.ecolur.org/hy/news/forest/13205/>

հարցերը: Մասնակցում էին և ելույթներով հանդես եկան՝ ՄԱԶԾ Կլիմայի փոփոխության ծրագրերի համակարգող Դիանա Հարությունյանը, ՄԱԶԾ-ԿԿՀ ծրագրի ոռոգման նորմերի մշակման և ոռոգման պլանավորման հարցերի միջազգային փորձագետ Ստեֆան Գալկան, ՄԱԶԾ-ԿԿՀ ծրագրի ոռոգման նորմերի մշակման և ոռոգման պլանավորման հարցերի ազգային փորձագետ Գևորգ Աֆյանը, «Հայջրնախագիծ ինստիտուտ» ՓԲԸ-ի խորհրդի նախագահ Յուրի Ջավադյանը, «ԷկոԼուր» տեղեկատվական ՀԿ-ի նախագահ Ինգա Ջարաֆյանը, Հայաստանում Ֆրանսիայի ջրերի միջազգային գրասենյակի թիմի ղեկավար Ֆլորենս Պինտուսը, Ֆրանսիայի ջրերի միջազգային գրասենյակի ազգային փորձագետ Օլիմպիա Գեղամյանը, Ֆրանսիայի ջրերի միջազգային գրասենյակի Կլիմայի փոփոխության և ջրային ոլորտի հարմարվողականության փորձագետ Ալեքսանդր Առաքելյանը, Ֆրանսիայի ջրերի միջազգային գրասենյակի գենդերային հարցերով փորձագետ Արմենուհի Բուրմանյանը, Ֆրանսիայի ջրերի միջազգային գրասենյակի ջրային ռեսուրսների կառավարման փորձագետ Լիանա Մարգարյանը:

1. ՄԱԶԾ Կլիմայի փոփոխության ծրագրերի համակարգող Դիանա Հարությունյանն իր ողջունի խոսքում ընդգծեց ջրային ռեսուրսների կառավարման խնդրի կարևորությունը, անդրադարձավ ՄԱԶԾ-ԿԿՀ Հարմարվողականության ազգային ծրագրի շրջանակում որպես առաջնահերթ լուծում պահանջող ոռոգման ջրի խնդիրների ընտրության հիմնավորմանը: Ընդգծեց ոռոգման ջրի կորուստներով պայմանավորված հողային ռեսուրսների դեգրադացիայի և ջրային ռեսուրսների հասանելիության անհամաչափության և ջրային համակարգերի բացակայության պատճառով գյուղատնտեսության ոլորտի զարգացման հեռանկարի և երկրի տնտեսության և պարենային անվտանգության կապը:

2. ՄԱԶԾ-ԿԿՀ ծրագրի ոռոգման նորմերի մշակման և ոռոգման պլանավորման հարցերի միջազգային փորձագետ Ստեֆան Գալկան նշեց, որ վերանայվել է դեռևս 1998թ. հրապարակված գյուղատնտեսական կուլտուրաների համար անհրաժեշտ ոռոգման ջրի նորմերի մեթոդաբանությունը և ոռոգման ծրագրերում դրա կիրառման կարևորությունը բոլոր միջազգային ֆինանսական կազմակերպությունների համար: Բանախոսի կարծիքով կլիմայի փոփոխություններով պայմանավորված ջրի նվազմանը դիմակայելու լավագույն մեթոդը մշակաբույսերի ոռոգման ջրի ծավալի կրճատումն է:

3. ՄԱԶԾ-ԿԿՀ ծրագրի ոռոգման նորմերի մշակման և ոռոգման պլանավորման հարցերի ազգային փորձագետ Գևորգ Աֆյանն անդրադարձավ գյուղատնտեսական մշակաբույսերի ոռոգման նորմերի արդիականացման քաղաքականությանը, որն է Հայաստանում գործող ոռոգման ռեժիմների համապատասխանեցումը միջազգային փաստաթղթերի պահանջներին: Մասնավորապես, բանախոսը ներկայացրեց գյուղատնտեսական մշակաբույսերի ոռոգման ջրապահանջների սահմանման գործող, առաջարկվող փաստաթղթերի տարբերությունները: Նա առաջարկեց որ գյուղատնտեսական մշակաբույսերի ոռոգման ջրապահանջները պետք է սահմանել մոդելավորման ժամանակակից համակարգչային ծրագրի օգտագործմամբ՝ հիմք ընդունելով մշակաբույսերի, հողի ջրաֆիզիկական բնութագրերի, գրունտային ջրերի մակարդակի, փաստացի ջրման գործընթացների, ագրոտեխնիկական միջոցառումների և բերքատվության վերաբերյալ ուսումնասիրությունները: Արդիականացված ոռոգման ռեժիմները կնպաստեն արդյունավետ ոռոգման համակարգերի նախագծմանը, ինչպես նաև ջրօգտագործող ընկերությունների և ֆերմերների կողմից ջրի արդյունավետ և խնայողաբար օգտագործմանը: Ըստ բանախոսի՝ Ծրագրի արդյունքում ակնկալվում է, որ

ներկայումս գործող 2007թ. ձեռնարկում ներկայացված ոռոգման ռեժիմների համեմատությամբ առաջարկվողին անցումը կապահովի 10-30% ջրի խնայողություն:

4. «Հայջրնախագիծ ինստիտուտ» ՓԲԸ-ի խորհրդի նախագահ Յուրի Ջավադյանն անդրադարձավ հողերի բաշխման անհամաչափության խնդրին, մասնավորապես, ժամանակին գյուղացիներին տրված հողերը բաղկացած են եղել մի քանի հողակտորներից, ինչը խոչընդոտել է գյուղատնտեսական աշխատանքների լիարժեք կատարմանը: Քննարկման ժամանակ առաջարկվեց ամբողջական շղթայի մեջ դիտարկել ջրօգտագործողին, մատակարարին և կլիմայի փոփոխության ազդեցության հետևանքները:

5. «ԷկոԼուր» տեղեկատվական ՀԿ-ի նախագահ Ինգա Ջարաֆյանը նշեց, որ անհրաժեշտ են նաև ինստիտուցիոնալ փոփոխություններ, մասնավորապես՝ բարձրացնել Ջրային կոմիտեի կարգավիճակը, վերականգնել Գյուղատնտեսության նախարարությունն իր լիազորությունների ամբողջությամբ: Առաջարկը հավանության արժանացավ համաժողովի մասնակիցների կողմից: Ինգա Ջարաֆյանը նաև առաջարկեց լրջորեն գնահատել Հայաստանի ջրային ռեսուրսները: Որպես օրինակ նա բերեց Արարատյան դաշտի ստորերկրյա ջրերի հաշվեկշռի խախտման և հողերի աղակալման փաստերը:

5. Հայաստանում Ֆրանսիայի ջրերի միջազգային գրասենյակի թիմի ղեկավար Ֆլորենս Պինտուրը ներկայացրեց Հայաստանի ջրային ոլորտի հարմարվողականության ծրագրի մշակման նպատակը, աշխատանքի շրջանակն ու ակնկալվող արդյունքները: Ըստ նրա՝ նախատեսվում է ջրային ռեսուրսների հարմարվողականության ծրագրի պլանի երեք տարբերակ՝ առաջին՝ հարմարվողականության պլանը հաստատվում է ՀՀ կառավարության որոշմամբ, ՀՀ ջրային օրենսգրքում կատարվում են փոփոխություններ և լրացումներ: Համաձայն երկրորդ տարբերակի՝ պլանը կհաստատվի կառավարության որոշմամբ՝ առանց շաղկապելու Ջրային օրենսգիրքը: Երրորդ տարբերակով պլանը կհաստատվի ՀՀ շրջակա միջավայրի նախարարի հրամանով՝ առանց Ջրային օրենսգրքի հետ կապելու:

6. Ֆրանսիայի ջրերի միջազգային գրասենյակի ազգային փորձագետ Օլիմպիա Գեդամյանը ներկայացրեց կլիմայի փոփոխության քաղաքականությունը Հայաստանում և դրա համադրումը ջրային ոլորտի քաղաքականության հետ՝ ընդգծելով այդ ոլորտում պետական կառավարման մարմինների իրավասությունների հստակ շրջանակի և լիազորությունների տարանջատման անհրաժեշտությունը:

Բանախոսն անդրադարձավ «Կլիմայի փոփոխության մասին ՄԱԿ-ի շրջանակային կոնվենցիային, Ազգային մակարդակով նախատեսված գործողություններին (NDC), Փարիզյան համաձայնագրին, Կենսաբազմազանության մասին կոնվենցիային և սկզբունքներին, Կայուն զարգացման սկզբունքներին, Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների մասին Եվրոպական կոնվենցիային, Եվրոպական Միության դիրեկտիվներին, Հայաստան-ԵՄ համապարփակ և ընդլայնված գործընկերության համաձայնագրին:

7. Կլիմայի փոփոխության և ջրային ոլորտի հարմարվողականության փորձագետ Ալեքսանդր Առաքելյանն անդրադարձավ դիտվող և կանխատեսվող կլիմայական և հիդրոլոգիական ցիկլի փոփոխություններին՝ նշելով, որ պետք է մաքսիմալ հստակեցնել ջրապահանջարկը կլիմայի փոփոխության համատեքստում:

8. Ֆրանսիայի ջրերի միջազգային գրասենյակի գենդերային հարցերով փորձագետ Արմենուհի Բուրմանյանը ներկայացրեց Կլիմայի փոփոխության գենդերային դիտարկումը և սոցիալական ազդեցությունը: Նա նշեց գենդերային անհավասարության, կյանքի, աղքատության խորացման վրա կլիմայի փոփոխության մասին: Կարևորեց Կլիմայի փոփոխության ազդեցությունները մեղմելու ծրագրեր մշակելիս նաև կլիմայի փոփոխության հետևանքով գենդերային անհավասարության մեծացման և կանանց ֆինանսական անկախ լինելու կարողությունների նվազեցման հանգամանքի հարցերի անպայման դիտարկումը, ինչպես նաև Հայաստանում տղամարդկանց աճող միգրացիայի պայմաններում գյուղատնտեսական աշխատանքում կանանց ներգրավվածության մեծացման հանգամանքները:

Ըստ բանախոսի՝ Հայաստանը զգալիորեն բարելավել է խմելու ջրի մատակարարումը: Սակայն բնակչության 23.4%-ին հասանելի չեն բարելավված ջրահեռացման, կեղտաջրերի հավաքման և մաքրման ծառայությունները: Անվտանգորեն կառավարվող սանիտարական ծառայությունների մատչելիություն ունեցող քաղաքային և գյուղական բնակչության միջև խզումը կազմում է 47.5%: 579 բնակավայրում (որից միայն երկուսն են քաղաքային)՝ 680 հազար բնակչությամբ, ջրամատակարարումն իրականացվում է համայնքապետարանների կողմից, այլ ոչ թե ջրային օպերատորների կողմից: Այս համայնքներում ջրի սպառման վերաբերյալ տվյալներ գոյություն չունեն, քանի որ չկա ջրի օգտագործման չափում:

9. Ֆրանսիայի ջրերի միջազգային գրասենյակի ջրային ռեսուրսների կառավարման փորձագետ Լիանա Մարգարյանը խոսեց ջրային ոլորտի հարմարվողականության ծրագրերում ներառվող միջոցառումների խնդիրների ու դրանց լուծումների մասին: Նա ներկայացրեց Հայաստանում տարեկան օգտագործելի մակերեսային ջրերի՝ 8.1 մլրդ. խմ և ստորերկրյա ջրերի՝ 1 մլրդ. խմ ծավալների, Հայաստանի 3 միլիոն մշտական բնակչությամբ տարեկան մեկ անձի հաշվով շուրջ 3100 խմ ջրօգտագործման ջրային ռեսուրսների, դրանց տարածական և ժամանակային բաշխման անհամաչափության և ջրապահանջի՝ ըստ ջրօգտագործման տարբեր ոլորտների չբավարարման և ըստ կանխատեսումների, 2030-2040թթ. ՀՀ կենտրոնական և հարավային մասերում մինչև 80% ջրի սթրեսի ինդեքսի աճի վերաբերյալ տվյալները:

Լիանա Մարգարյանն ասաց, որ տարբեր միջոցառումներով հնարավոր է ապահովել ջրի որոշակի քանակություն և հասանելիություն, ապա հարց է առաջանում՝ այդ ջրի քանակությունն արդյո՞ք պիտանի կլինի տարբեր ոլորտներում օգտագործելու համար:

Անդրադառնալով կլիմայի փոփոխության նկատմամբ 6 առավել խոցելի ոլորտներին՝ բանախոսն ընդգծեց, որ դրանք ընտրվել են՝ հիմնվելով «ՄԱԿ-ի «Կլիմայի փոփոխության մասին» շրջանակային կոնվենցիայի ներքո ՀՀ ազգային մակարդակով սահմանված նախատեսվող գործողություններին/ներդրումին» հավանություն տալու և «Փարիզյան Համաձայնագրի ներքո ՀՀ 2021-2030թթ. ազգային մակարդակով սահմանված գործողությունները հաստատելու մասին» կառավարության որոշումների վրա:

Հրապարակումներ

- ✚ «Ներկայացվել են կլիմայի փոփոխության համատեքստում ոռոգման նորմերի արդիականացմանն ուղղված հետազոտության արդյունքները»²⁶
- ✚ «Հայաստանում մեկնարկել են ջրային ռեսուրսների հարմարվողականության ծրագրի պլանավորման աշխատանքները»²⁷

7. 2021թ. մայիսի 7-ին կայացած՝ «Փարիզի համաձայնագրի ներքո Հայաստանի թափանցիկության ազգային շրջանակի կառուցումը» ՄԱԶԾ-ԳԷՀ ծրագրի մեկնարկային աշխատաժողովի լուսաբանում



Նկար 9. «Փարիզի համաձայնագրի ներքո Հայաստանի թափանցիկության ազգային շրջանակի կառուցումը» ՄԱԶԾ-ԳԷՀ ծրագրի մեկնարկային աշխատաժողով

Մեկնարկային աշխատանքներին մասնակցում էին՝ ՄԱԶԾ Կլիմայի փոփոխության ծրագրի համակարգող Դիանա Հարությունյանը, ՄԱԶԾ միջազգային փորձագետ Սյուզան Լեգրոն, տարածաշրջանային տեխնիկական խորհրդատու Էսթեր Բարիցը:

Նախատեսվող ծրագիրը նպատակ ունի իրականացնելու՝ Փարիզյան համաձայնագրի 13 հոդվածի 7-10 պարբերություններով ՀՀ կառավարության ստանձնած՝ պարբերաբար ներկայացնել ջերմոցային գազերի մարդածին արտանետումների ազգային կադաստրի և Ազգային մակարդակով սահմանված ներդրումների (ԱՍԳ) իրականացման առաջընթացին հետևելու, հարմարվողականության գործողությունների և ստացված աջակցության տնօրինման մասին հավաքագրված տեղեկությունների մասին զեկույցների ներկայացման պարտավորությունների ապահովումը:

Ծրագիրը կօժանդակի ինստիտուցիոնալ և տեխնիկական կարողությունների հզորացմանը՝ Փարիզյան համաձայնագրի հոդված 13-ով հասկերորոշված ընդլայնված թափանցիկության պահանջներին բավարարելու համար: Ծրագիրը թույլ կտա անցնել շարունակական Չափումների, հաշվետվայնության և հավաստագրման համակարգի (ՉՀՀ), ինչը կօգնի համակարգված եղանակով գրանցել թափանցիկության ընդլայնման համար նախաձեռնվող գործողությունները և հնարավորություն կտա երկրին հետևել իր առաջընթացին՝ ԱՍԳ-ի պահանջով ստանձնած պարտավորությունների կատարման հարցում: Ծրագրի ազգային իրականացնող մարմինը Շրջակա միջավայրի նախարարությունն է, իրականացնող գործակալությունը՝ ՄԱԿ-ի Զարգացման Ծրագիրը, իսկ ֆինանսավորումը կհատկացնի Գլոբալ Էկոլոգիական հիմնադրամը (ԳԷՀ):

²⁶ <https://www.ecolur.org/hy/news/climate-change/13172/>

²⁷ <https://www.ecolur.org/hy/news/climate-change/13191/>

Մասնավորապես, ԳԷՀ-ի կողմից տրամադրվելու է 990 հազար ԱՄՆ դոլար, իսկ Շրջակա միջավայրի նախարարության և Հայաստանում ՄԱԶԾ գրասենյակի համաֆինանսավորումը (բնեղեն) կկազմի համապատասխանաբար՝ 400 հազար և 170 հազար ԱՄՆ դոլար: Ծրագրի տևողությունը երեք տարի է:

Ծրագրի ակնկալվող արդյունքներն են.

- Հայաստանում թափանցիկության գործողությունները կառավարվում են հստակ և ֆորմալ դերերով և պատասխանատվություններով
- Հայաստանն օգտագործում է ինտեգրված ՉՀՀ համակարգ՝ Փարիզյան համաձայնագրի հոդված 13-ի համաձայն տվյալների շարունակական հավաքագրման և զեկուցման համար
- Հայաստանը կարող է կառավարել տվյալները՝ ջերմոցային գազերի աղբյուրների և կլանիչների մասին արդյունավետ թափանցիկությամբ զեկուցելու համար
- Հայաստանը կարող է կառավարել տվյալները՝ համաձայն Փարիզյան համաձայնագրի հոդված 13-ի թափանցիկության գործողության շրջանակի և թափանցիկությանը օժանդակող շրջանակի
- Հայաստանը կարող է հետևել Ազգային մակարդակով սահմանված ներդրումների պահանջի ապահովման ընթացքին և միջազգային մակարդակում կիսվել իր մոտեցումներով և արդյունքներով:

Աշխատաժողովի ընթացքում ՄԱԶԾ Կլիմայի փոփոխության ծրագրի համակարգող Դիանա Հարությունյանն ընդգծեց, որ Ծրագրի նպատակն է դարձնել ցուցանիշներն առավել վստահելի և բացառել ցուցանիշների հավաքագրման անհամապատասխանություններն ու տարբերությունները: Նա իրազեկեց համաժողովի մասնակիցներին, որ ծրագրի պատրաստման ընթացքում քննարկվել են Հայաստանի կողմից ստորագրված բոլոր համաձայնագրերն ու կոնվենցիաները: Ներկայացրեց Ծրագրի բաղադրիչները՝ 1. հստակեցնել ֆորմալ դերերն ու պարտականությունները, մշակել և ընդունել իրավական և թափանցիկության կարգավորումները, 2. ապահովել այնպիսի տեխնիկական և ծրագրային խնդիրներ, որոնք թույլ կտան կատարած չափումների ու հաշվետվողականության մեխանիզմի իրականացում և մեկ տեղում հասանելիություն, 3. բարելավել ազգային կադաստրը՝ մշակելով հստակ ձևաչափերը, 4. ծրագիրը պետք է անցնի անկախ վերահսկողություն, իսկ ընթացքում ենթարկվի մոնիթորինգի գնահատման և եռամսյակը մեկ զեկուցվի առաջընթացի մասին:

ՄԱԶԾ միջազգային փորձագետ Սյուզան Լեգրոն ներկայացրեց Փարիզյան համաձայնագրի ընդլայնված թափանցիկության շրջանակին ներկայացվող պահանջները: Նա նշեց, որ այս Ծրագիրն ու արդյունքում փորձառությունը կարևոր ներդրում կարող են հանդիսանալ Հայաստանի համար: «Ունենք ընդհանուր ուղեցույց, ընդհանուր գաղափարներ: Կողմերից ակնկալվում է իրականացնել ինստիտուցիոնալ աշխատանքներ: Ինչ վերաբերում է ջերմոցային գազերի գույքագրմանը, ապա շատ ցուցանիշներ արդեն իսկ ներկայացվել են Հայաստանի կողմից, մասնավորապես, ազգային ջերմոցային գազերի գույքագրումն ու մեղմման գործողությունները», - նշեց նա:

Տարածաշրջանային տեխնիկական խորհրդատու Էսթեր Բարիցն անդրադարձավ ԳԷՀ-ի մոնիթորինգի և գնահատման պահանջներին, որիսկերի կառավարման

ռազմավարությանը: Նա նշեց, որ աշխատանքների նպատակն է ներկայացնել ընկալումներն ու արդյունքները, ստեղծել աջակցության թիմ, հստակեցնել դերերն ու ծրագրի արդյունքների շրջանակը, պլանավորել և ավարտին հասցնել առաջին տարվա տարեկան պլանը: Ներկայացնելով հաշվետվությունների մեջ ներառվող բաղադրիչները՝ Էսթեր Բարիցն ընդգծեց, որ առաջին հերթին դրանք եռամսյակային հաշվետվություններն են ու ռիկսերի կառավարման վերաբերյալ հարցերը:

Հրապարակում

✚ Մեկնարկել է «Փարիզի համաձայնագրի ներքո Հայաստանի թափանցիկության ազգային շրջանակի կառուցումը» ծրագիրը»²⁸

8. Լուսաբանվել է 2021թ. մայիսի 14-ին Երևանում տեղի ունեցած՝ Clean Energy Talk՝ «Հայաստանի կանաչ քառակուսի» միջոցառումը, որը կազմակերպել էր «Ռոսատոմ» պետկորպորացիան՝ ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության և Երևանում գիտության ու մշակույթի ռուսաստանյան կենտրոնի հետ համատեղ



Նկար 10. Clean Energy Talk՝ «Հայաստանի կանաչ քառակուսի» միջոցառում

ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության Էներգետիկայի վարչության պետ Տիգրան Մելքոնյանը ներկայացրեց ՀՀ Էներգետիկայի բնագավառի զարգացման ռազմավարական ծրագիրը (մինչև 2040թ.)՝ անդրադառնալով Հայաստանում քամու, արևային և հիդրոէներգետիկայի զարգացման հեռանկարներին: Նա նշեց, որ առաջնային է վերականգնվող էներգետիկ պաշարների տնտեսապես արդյունավետ և ողջամիտ օգտագործումը՝ բնապահպանական բոլոր չափանիշներին համապատասխան: Ըստ նրա՝ նախատեսվում է Էներգետիկ հաշվեկշռում վերականգնվող էներգիայի մասնաբաժնի հնարավոր առավելագույն աճի ապահովում՝ 2030 թվականին առնվազն 15% արևային էներգիայի մասնաբաժնով, էներգախնայողության և էներգաարդյունավետության միջոցառումների լայնածավալ իրականացում, էներգախնայողության և էներգաարդյունավետ տեխնոլոգիաների ներդրում կանաչ և գիտելիքահենք տնտեսության անցման գործում:

²⁸ <https://www.ecolur.org/hy/news/officials/13187/>

Տիգրան Մելքոնյանն, անդրադառնալով հիդրոէներգետիկայի զարգացմանը, նշեց, որ «Լոռիբերդ 1» և «Լոռիբերդ 2» փոքր ՀԷԿ-երը որպես ռեզերվներ մնացել են մեր ռազմավարական ծրագրում, բայց այս պահին բնությունը վնասող քայլ չի արվում և միանշանակ չի արվի՝ համաձայն նոր ընդունված օրենսդրական փոփոխության:

Հայկական ԱԷԿ-ի շահագործման ժամկետի երկարաձգման նախագծի ռուսական կողմի ղեկավար **Յուրի Սվիրիդենկոն** ներկայացրեց «Ռոսատոմ» պետկորպորացիայի գործունեությունը, էներգետիկ ոլորտում ունեցած հաջողությունները, խոսեց էլեկտրաէներգիա արտադրող կայանների՝ շրջակա միջավայրի վրա ունեցած ազդեցությունների, ՀԱԷԿ-ի պատմության մասին:

ՄԱԶԾ կլիմայի փոփոխության ծրագրերի համակարգող **Դիանա Հարությունյանը** ներկայացրեց կլիմայի փոփոխության պատճառներն ու հետևանքները, խոսեց ջերմոցային գազերի մասին: Նա նշեց, որ ջերմոցային գազերի արտանետումների տեսանկյունից Հայաստանը գտնվում է լավագույն մակարդակում: Մեր պարտավորությունները, որոնք առկա էին մշակված սցենարներում, հստակ իրականացրել ենք՝ ունենք ջերմոցային գազերի արտանետումների նվազում: Մենք կարող ենք առաջիկա տարիներին նույնպես զգալիորեն նվազեցնել արտանետումները, ինչը խոսում է այն մասին, որ Փարիզյան համաձայնագրով ստանձնած պարտավորությունների չկատարման ռիսկեր չկան:

Հրապարակում

🇦🇲 «Երևանում անցակցվեց Clean Energy Talk՝ «Հայաստանի կանաչ քառակուսի» միջոցառումը»²⁹

9. Լուսաբանվել է 2021թ. մայիսի 14-ին Երևանում անցկացված «Կլիմայի փոփոխության հարմարվողականությունը Հայաստանում. մարտահրավերներ ու հնարավորություններ» խորագրով էքսպո-ֆորումը



Նկար 11. «Կլիմայի փոփոխության հարմարվողականությունը Հայաստանում. մարտահրավերներ ու հնարավորություններ» խորագրով էքսպո-ֆորում

Էքսպո-ֆորումն անցկացվեց «Հարմարվողականության ազգային ծրագիր՝ Հայաստանում միջնաժամկետ և երկարաժամկետ հարմարվողականության պլանավորման առաջնադասցման համար» ծրագրի շրջանակում: Էքսպո-ֆորումում տարբեր ոլորտների շուրջ 120 ներկայացուցիչներ կլիմայի փոփոխության հարմարվողականությանն առնչվող հարցերին անդրադարձան թեմատիկ քննարկումների ձևաչափով՝ դիտարկելով դրա ազդեցությունը երկրի ամենատարբեր ոլորտների վրա:

²⁹ <https://www.ecolor.org/hy/news/climate-change/13194/>

Կլիմայի փոփոխությանը ժամանակին և պատշաճ արձագանքելը կարևոր նշանակություն ունի ցանկացած երկրի կայուն զարգացման համար: Հայաստանը կլիմայի փոփոխության նկատմամբ խոցելի երկրների ցանկում է: 1,3°C-ով աճել է տարեկան միջին ջերմաստիճանը, 9 տոկոսով նվազել է տեղումների քանակը, ավելացել է վտանգավոր կլիմայական երևույթների քանակն ու ուժգնությունը: Այս ամենն իր ազդեցությունն է ունենում տնտեսության բոլոր ոլորտների վրա՝ գյուղատնտեսություն, առողջապահություն, ջրային պաշարների կառավարում, զբոսաշրջություն, էներգետիկա, բնակավայրերի զարգացում և այլն:

ՀՀ շրջակա միջավայրի նախարարության կլիմայական քաղաքականության վարչության պետ Նոնա Բուդոյանը, ողջունելով նախաձեռնությունը, նշեց, որ կլիմայի փոփոխությանն առնչվող հարցերը Հայաստանի՝ որպես զարգացող երկրի համար չափազանց կարևոր են, քանի որ զարգացող երկրների դեպքում այս գործընթացները ենթադրում են նաև առկա կենսապայմանների բարելավում:

Միջոցառման ընթացքում մասնակիցները վեց աշխատարաններում քննարկեցին կլիմայի փոփոխության տեսանկյունից առավել խոցելի ոլորտներում առկա խնդիրները, դրանց ուղղված հարմարվողականության գործողություններն ու համագործակցության հնարավորությունները:

Միջոցառման ընթացքում կայացավ նաև Կանաչ էքսպո, որի շրջանակում մի շարք մասնավոր ընկերություններ ներկայացրեցին հարմարվողականության գործընթացին նպաստող իրենց արտադրանքն ու ծառայությունները՝ պարարտանյութերից մինչև տեխնիկական լուծումներ:

Ծրագրի հարմարվողականության ինստիտուցիոնալ զարգացման հարցերով թիմի ղեկավար Արամ Տեր-Ջաքարյանը նշեց. «Հայաստանում շուրջ 20 տարի կլիմայի փոփոխության հետ կապված խնդիրները գտնվում են ՄԱԿ-ի Զարգացման ծրագրի ուշադրության կենտրոնում: Ներկայումս Շրջակա միջավայրի նախարարության հետ համատեղ իրականացվող «Հարմարվողականության ազգային ծրագիր Հայաստանում» նախաձեռնությունը նպատակ ունի աջակցել կլիմայի փոփոխության հետ կապված խնդիրների հաղթահարմանը՝ մշակելով համապատասխան հարմարվողականության միջոցառումների փաթեթներ և նախանշելով դրանց իրականացման ուղիները»:

Հրապարակում

 «Անցկացվել է «Կլիմայի փոփոխության հարմարվողականությունը Հայաստանում. մարտահրավերներ ու հնարավորություններ» խորագրով էքսպո-ֆորում»³⁰

³⁰ <https://www.ecolur.org/hy/news/climate-change/13190/>